

ԵՐԱԿՐՈՆԵԱ ՄԱՍԿՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏԿԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 հունիսի

ՀՀ-ում Իտալիայի Նորանշանակ դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ալֆոնսո Դի Ռի-զոլին:

Շնորհավորելով եւ իր բարեմաղթանքները

բերելով դեսպանին նշանակման առիթով՝ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ նրա պաշտոնավարման շրջանում հայ-իտալական բարեկամական փոխհարաբերություններն էլ ավելի կզարգանան ու կարողունավորվեն նորանոր համատեղ իրագործումներով:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու ժողովուրդների պատմական առնչություններին, որոնց համար բոլոր ժամանակներում ամուր հիմք են հանդիսացել քրիստոնեական հավատը եւ դավանվող նույն արժեքահամակարգը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը խոսեց նաեւ Հայոց եկեղեցու եւ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու միջեւ առկա ջերմ հարաբերությունների եւ սոցիալական ու կրթական սերտ գործակցության մասին:

Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետն Իտալիայի դեսպանին ներկայացրեց իր մտահոգությունները՝ Հայաստանի սահմանների նկատմամբ աղբյուրանական զինված ուժերի ունեցվածությունների, ռազմագերիներին ազատ չարձակելու, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում Հայոց եկեղեցու հոգեւոր-մշակութային ժառանգության ոչնչացման եւ յուրացման նկատմամբ դրսևորվող բարդացվածության առնչությամբ: Առկա խնդիրների հաղթահարման գործում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւոր նկատեց միջազգային համրության եւ բարեկամ երկրների ջանքերը:

Քովենթի եպիսկոպոս Քրիստոֆերին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Լորդերի պալատի անդամ, Քովենթի եպիսկոպոս Քրիստոֆերին՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանի:

Նորին Սրբությունը ողջունեց Քրիստոֆեր եպիսկոպոսի ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ընդգծելով, որ վերջինս առաջիկա օրերին հնարավորություն կունենա հաղորդ դառնալու հայ ժողովրդի կյանքին ու դիմագրավելիք մարտահրավերներին, պատմությանը եւ բազմադարյան հոգեւոր, մշակութային հարուստ ժառանգությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Քովենթի առաջնորդին՝ դժվարին այս շրջանում հայ ժողովրդին ցուցաբերած իր գորակցության եւ հատկապես հայ ռազմագերիների ազատ արձակման եւ հայոց սրբավայրերի պահպանության ուղղությամբ գործադրած ջանքերի համար:

Իր հերթին Քրիստոֆեր եպիսկոպոսն ուրախություն հայտնեց Հայաստան այցելելու հնարավորության համար: Անդրադառնալով պատերազմի պատճառած ծանր կորուստներին՝ վերջինս

իր վշտակցությունն ու աջակցությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ապա տեղեկացրեց Քովենթի մայր տաճարում այդ կապակցությամբ կազմակերպված հատուկ արարողությունների եւ միջոցառումների մասին:

Քովենթի առաջնորդը նաեւ գոհունակությամբ փաստեց Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի ու հայ համայնքի հետ ձեռավորված սերտ գործակցությունը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն եւ Լորդերի պալատի անդամ, Քովենթի եպիսկոպոս Քրիստոֆերը հանգամանորեն ըննարկեցին հետպատերազմյան իրավիճակին, Արցախի եւ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի անվտանգությանը եւ Ադրբեջանում գերության մեջ գտնվողների վերադարձին առնչվող խնդիրները: Մասնավոր անդրադարձ կատարվեց Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող արցախյան տարածքներում հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության ոչնչացման եւ յուրացման հարցերին: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց իր մտահոգությունները:

15 հունիսի

Մերձավոր Արեւելքի կաթոլիկ բարեկեցության
ընկերության ներկայացուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մերձավոր Արեւելքի կաթոլիկ բարեկեցության ընկերության (CNEWA) ներկայացուցիչներ Թովմաս Վարգեզեանին եւ Միքայել Լա Սիվիտանին՝ ուղեկցությամբ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի Հայ Կաթողիկե եկեղեցու առաջնորդի օգնական Նարեկ վրդ. Մնոյանի:

Հանդիպմանը հայր սուրբն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց հյուրերին՝ տեղեկություններ փոխանցելով կազմակերպության գործունեության մասին:

Զրույցի ընթացքում խոսվեց Հայոց եկեղեցու տարբեր կառույցների կողմից հոգեփրկչական առաքելությանը զուգահեռ՝ արցախյան երկրորդ պատերազմի արհավիրքները կրած հայ ժողովրդի զավակներին ցուցաբերվող շարունակական մարդասիրական եւ սոցիալական օգնության մասին: Այս առնչությամբ Հայոց Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց կազմակերպության ներկայացուցիչներին՝ պա-

տերազմի հետեւանքով տուժած հայորդիներին աջակցություն եւ օգնություն ցուցաբերելու համար: Նորին Սրբությունը երախտագիտությամբ անդրադարձավ նաեւ միջազգային տարբեր կառույցների կողմից դժվարին այս շրջանում Հայաստանին ու Արցախին ցուցաբերված գորակցությանը:

Վեհափառ Հայրապետը խոսեց ներկա մարտահրավերների մասին՝ մասնավորապես հյուրերի ուշադրությունը հրավիրելով Հայաստանի սահմանների նկատմամբ ունեցվածությունների փաստին, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության հանդեպ վայրագ վերաբերմունքին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին հայ ռազմագերիների ազատ արձակմանը, վիրավոր զինվորներին եւ տեղահանված ընտանիքներին օգնելու ուղղությամբ Մայր Աթոռի կողմից տարվող աշխատանքներին:

25 հունիսի

Հունգարիայից մի խումբ ուխտավորների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայից ժամանած մի խումբ ուխտավորների, որոնց թվում էին Հունգարիայի փոխվարչապետ Ժոլտ Շեմյենը եւ Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ներկայացուցիչներ:

Հայաստան—Հունգարիա բարեկամության եւ մշակութային կապերի ընկերության նախագահ Անահիտ Սիմոնյանը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց կրթական երկու հաստատությունների միջեւ առկա սերտ գործակցությանը, Հայոց եկեղեցու մի-



Հանդիպմանը ներկա էին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը, Երեւանի հաշատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ղեկավոր, պ. գ. դ., պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը եւ

ջեկեղեցական հարաբերություններին, ինչպես նաեւ Հունգարիայի հայ համայնքի կյանքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն առանձին հանդիպում ունեցավ նաեւ Հունգարիայի փոխվարչապետ Ժոլտ Շեմյենի հետ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը արժանապատիվ խորհրդարանական ընտրությունների առիթով

Սիրելի ժողովուրդ,
Մեր հայրենիքի համար վճռական օրվա շեմին ենք։ Արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցությամբ որոշելու ենք մեր երկրի գալիքի կերտման ուղին։ Մենք ամենքս

Այսօր մեզ պատուհասած ծանր կորուստների պայմաններում, առավել, քան երբեք, մենք պարտք ու պատասխանատվություն ունենք մեր անկախ պետականության պահպանման ու ամրապնդման, մեր հայրենիքի գորացման համար։ Պատասխանատվություն ունենք մեր զոհված նահատակների լուսավառ հիշատակի, մեր ներկայի ու գալիքի, մեր սերունդների առջև։ Ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռք, մեր ժողովրդի առջև հառնած է հրամայականը՝ թոթափելու հետպատերազմյան եւ նախընտրական օրերին ստեղծված լարվածությունը, վերահաստատելու համերաշխությունը։ Նաեւ կենսական անհրաժեշտություն է, որ հետընտրական շրջանում մեր երկրի ներքին կյանքն ընթանա համոզարտության եւ ողջախոհության մթնոլորտում։ Երբեք եւ ոչ մի կերպ չեն կարող արդարացվել ազգը պառակտող գործողությունները եւ հասարակության մեջ թշնամանքի սերմանումը, բռնության ու հաշվեհարդարի կոչերը, բախումներ հրահրելը։ Հայրապետական Մեր հորդորն է, սիրելի ժողովուրդ, գերծ մնալ ատելության խոսքից, անհանդուրժողականությունից, դրսևորել զգոնություն, օրինահարգություն եւ նոր փորձություններով չվտանգել հայրենական մեր կյանքը։ Մեր պատմության մոր էջը կերտենք հավատքով ու լավատեսությամբ, սիրով ու միասնականությամբ։ Միշտ հիշենք, որ Հայաստանում կայուն իրավիճակով, մեր ամուր պետականությամբ են մատչելի պայմանավորված Արցախի ապագան, արցախաբնակ մեր քույրերի ու եղբայրների հիմնախնդիրների հաղթահարումը։ Այս գիտակցությամբ, այս ոգով ու հանձնառությամբ մասնակցություն բերենք ընտրություններին, անտարբեր չմնանք մեր երկրի վաղվա օրվա հանդեպ, որպեսզի մեր ազգային ու հայրենական անդաստանում տեղ չգտնեն նեղություններ ու տառապանքներ, մեր արհավիրքներ, որպեսզի միասիրտ ու միախորհուրդ հաղթահարենք ներքին ու արտաքին մարտահրավերները, կառուցենք հզոր ու պայծառ հայրենիք՝ խարսխված մեր ինքնությունը պայմանավորող ազգային ու հոգեւոր մեր արժեքների վրա։ Այս ընթացքով ի գործ կկրկնենք առատացնելու տերունական օրհնությունը մեր կյանքում եւ Հայաստանում ու Արցախում մարմնավորելու մեր ժողովրդի բարօրության ու առաջընթացի լուսավոր տեսիլքները։

Սիրելիներ, աղոթենք միասնաբար, որ առկա ճգնաժամի հաղթահարման բոլոր ջանքերը Աստծո ողորմությամբ պսակվեն բարի արդյունքներով։ Հայցենք, որ ամենախնամ Տերն Իր շնորհների եւ օրհնության ներքո պահի ու պահպանի մեր հայրենիքն ու աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին, պարգևի իմաստություն ու զորություն, խաղաղ ու ապահով կյանք Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո։

Աստծո գեր, օրհնությունն ու ողորմությունը մեր հայրենիքին ու մեզ ամենքիս. ամեն։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայտարարությունը

Հայաստանում 2021 թ. հունիսի 20-ին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրությունների առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հանդես է եկել հայտարարությամբ։

«Աստծո ողորմությամբ խորհրդարանական ընտրությունները, հակառակ մահլճնտրական լարվածությանը, սուր հակադրությունների եւ արձանագրված որոշ խախտումների, ունեցան համեմատաբար խաղաղ ընթացք եւ անցան առանց լուրջ միջադեպերի։

Եկեղեցու համար չափազանց կարեւոր է, որ երկրի ղեկավարումն ստանձնող քաղաքական ուժը կարող լինի ապահովելու եւ երաշխավորելու ազգանպաստ լուծումները կենսական այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են Հայաստանի, Արցախի եւ հավատավոր մեր ժողովրդի անվտանգությանը, ազգային ինքնության եւ արժեհամակարգի պաշտպանությանը, կրթությանը, մշակույթին, համրային համերաշխությանը եւ համազգային ընդգրկում ունեցող այլ խնդիրների։ Մայր Աթոռն եւ մեր Եկեղեցու հոգեւոր ողջ դասն իր դիրքորոշումներն ու մտահոգությունները պարբերաբար արտահայտել են ման կարեւորագույն հարցերի վերաբերյալ եւ այսուհետ եւս հետևողական են լինելու հիշյալ ոլորտներում պետական, ազգային եւ հոգեւոր առաջնային շահերի պաշտպանությանը։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրական է գնահատում հանրահավաքի ժամանակ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի երեկ կատարած անդրադարձը համերաշխության, միաբանության, համազգային ողջ ներուժի համախմբման կարեւորությանը՝ հայրենիքի անվտանգ, բարօր ու առաջընթաց կյանքի հաստատման գործում, ինչպես նաեւ՝ քաղաքական դաշտում հայիոյախոսությանը եւ ատելության խոսքին վերջ տալու անհրաժեշտությանը։ Ողջունելի է մաեւ վարչապետի պաշտոնակատարի կողմից հոգեւոր առաջնորդներին ուղղված երկխոսության առաջարկը։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապես հանդես է եկել այս դիրքերից եւ ակնկալում է, որ մոր ձեւավորվող իշխանությունը գործնական եւ հետևողական քայլեր կձեռնարկի Եկեղեցու հետ գործակցության իրենց իսկ առաջարկն իրականացնելու, ինչպես եւ համրային համերաշխություն ձեւավորելու ուղղությամբ։

Հոգեւոր դասը՝ գիտակից իր հոգեւոր առաքելությանը եւ դրա կարեւորությանը հատկապես մնա՛ծ ճգնաժամային իրավիճակներում, պիտի շարունակի անել ամեն անհրաժեշտը, որ մեր ժողովուրդը կարող լինի հաղթահարել իր կյանքի դժկարություններն ու մարտահրավերները, որ հայրենիքի անկախացյալ այս փորձիկ նշխարն ուժ գտնի իր մեջ վերականգնելու իր անվտանգությունն ու ամրությունը՝ շարունակելու ուղին դեպի մոր հայրուրանյակներ։

Հայցում ենք ամենակալ Աստծո օրհնությունն ու զորակցությունը մեր երկրին եւ մեր հավատավոր ժողովրդին։ Աստված թող պահի ու պահպանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը խաղաղության եւ բարօրության մեջ»։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության հրահանգներն առաջադրված են

Հունիսի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորագիր է հղել Երախիմ Ռայիսիին՝ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ։

«Ուրախ ենք մեծապես, որ Իրանի բարեսեր ժողովուրդը՝ ազգային ավանդների հավատարմությամբ, կառուցում է իր երկրի շեն ու բարօր կյանքը։ Մեր մաղթանքն է, որ Ձեր ղեկավարությամբ բարեկամ Իրանն արձանագրի նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ եւ շարունակի գովարժան ներդրում բերել տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդման գործին։

Գոհունակություն է Մեզ համար մաեւ, որ մեր երկու ժողովուրդների երկարամյա բարեկամությունն այսօր շարունակում է ամրանալ մեր պետությունների միջեւ արդյունավետ գործակցությամբ»,– ասված Վեհափառ Հայրապետի ուղերձում։

Հայոց Հայրապետն Իրանի հավատավոր ժողովրդին մաղթել է ապահով խաղաղություն, նորընտիր նախագահին՝ Բարձրյալի մշտական զորակցությունը։

Հայտարարություն

Խոր մտահոգությամբ տեղեկացանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Իգմիրլյան» բժշկական կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Արմեն Զարչյանի կալանավորման մասին։ Անվանի բժշկին առաջադրված մեղադրանքները մեծապես տարակուսելի են, եւ կալանավորման կայացված որոշումը՝ խիստ անհամաչափ, ինչի մասին փաստում են բազմաթիվ հեղինակավոր իրավագետներ։ Ստեղծված իրավիճակում բժշկի նկատմամբ իրականացված գործողությունները առերեսույթ դժվար է բնութագրել այլ կերպ, քան իսլամաճանք եւ անհիմն հետապնդում, ինչը միանշանակորեն դատապարտելի է։

Պատկան կառույցներին հորդորում ենք անհապաղ ազատ արձակել պրոֆեսոր Արմեն Զարչյանին՝ նկատի ունենալով նրա առողջական ոչ բարվոք վիճակը եւ նրա խնամքի տակ գտնվող անչափափաս երեխայի հանգամանքը։

Վաստակաշատ բժիշկ Արմեն Զարչյանը ամենածանր եւ դժվարին իրավիճակներում փրկել է հազարավոր կյանքեր եւ այսօր էլ, գլխավորելով Մայր Աթոռի «Իգմիրլյան» բժշկական կենտրոնը, շարունակում է իր անմնացորդ ծառայությունը բերել մեր ժողովրդին եւ հայրենիքին։ Այժմ, կալանքի ծայրահեղ միջոցի կիրառմամբ, վտանգված է նրա առողջությունը, ինչպես նաեւ բացառվել է նրա օժանդակությունը մարդկանց կյանքի եւ առողջության պաշտպանության հարցերում։

Վստահ ենք, որ քրեական գործով նախաքննությունը կարելի է անցկացնել առանց բժիշկ Արմեն Զարչյանին հասարակությունից մեկուսացնելու։

Լրատվական ճյուղերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

«Նորարար գրադարաններ 2021» հերթական աշխատաժողովը

Հունիսի 16–18-ը ծաղկածորում տեղի ունեցավ «Նորարար գրադարաններ 2021» հերթական աշխատաժողովը։ 2017 թվականից սկսած՝ամեն տարի անցկացվում են այս ֆորումները, որոնց մպատակն է աջակցել Հայաստանի հանրային եւ համալսարանական գրադարաններում աշխատանքի նորարար մեթոդների ներդրմանը, գրադարանային պաշարների թվայնացմանը, գրադարանային մարքեթինգին, գրադարանների՝ հանրության հետ կապերի եւ սոցիալական հարթակներում գրադարանների դրական իմիջի ձեւավորմանը։ Այս տարի աշխատաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մասնակցում էր «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի աշխատակցուհի Էմմա Ղազարյանը։ Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակից Ներսես Հայրապետյանը՝ փաստելով, որ ման աշխատաժողովները միտված են մոր գաղափարների լուսաբանմանն ու դրանց առաջ մղմանը։ Աշխատաժողովում աչքի էր ընկնում տեխնիկական հագեցվածությամբ։ Ժամանակի հետ առավել կարեւոր է դառնում գրադարաններում ժամանակակից, նորագույն տեխնոլոգիաների առկայությունը, քանի որ դրանցում է նորարարության գրավակամը։ Ֆորումի մասնակիցները ծանոթացան եռաչափ տպագրությանն ու մոդելավորմանը։ 3D տպիչի աշխատանքի հետ կապված իրենց փորձը փոխանցեցին ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակից Թոմ Ուիկսը եւ Լոռու մարզային գրադարանի աշխատակից Անդրանիկ Հովհաննիսյանը։ Գրադարանավարների հետ սոցցանցերի էջերի կառավարման իր փորձը փոխանցեց ԱՄՆ-ի դեսպանատան ներկայացուցիչ Քելլի Լոնգը։ «Գրադարան—Գրադարակ» ՀՀ-ի գործունեության, կատարած ու կատարվելիք աշխատանք-



ների մասին պատմեց ՀՀ-ի համահիմնադիր Արուսիկ Չեյնալյանը։ «Ինչպես ներգրավել ընթերցողներին թվային գրադարան» թեմային անդրադարձավ Ավ. Իսահակյանի անվան ԿԳ ՀՈԱԿ-ի ամերիկյան անկյան աշխատակցուհի Նելլի խաչատրյանը։ ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակցուհի Ամիրա Իսմայիլը խոսեց «Ինչպես ստեղծել ազդեցիկ ճյուղեր՝ ձեր հանդիսատեսի համար» թեմայով։ Ռուբեն Միրաքյանը՝ «Հայկական էլեկտրոնային գիրք» մախաձեռնության համահեղինակը, «Գործնական թվայնացում» գրադարանների համար» թեմայով ելույթ ունեցավ եւ գործնական աշխատանք կազմակերպեց Քինոլ սարքեր ստացած մարզային գրադարանների ներկայացուցիչների հետ։ ԳԱԱ-ից Տիգրան Զարգարյանը խոսեց «Թվային բազաների եւ էլեկտրոնային ընթերցիչների մասին», ՀԲԸՄ ՀԱՀ Փափագյան գրադարանի աշխատակցուհի Հասմիկ Գալստյանը սեմինար անցկացրեց «Գրադարաններ եւ մտավոր սեփականության իրավունք» թեմայով։

Եռօրյա ֆորումի շրջանակներում ելույթ ունեցան շատ ու շատ գրադարանների ներկայացուցիչներ՝ խոսելով իրենց գրադարաններում կիրառվող նորարար գաղափարների մասին։

Էմմա ՂԱԶԱՐՅԱՆ

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

«Անհրաժեշտ է հիմնավորապես գիտակցել, որ գրականության բոլոր տեսակներից արձակը ամենաքիչ գեղարվեստականն է: Իսկական գրականությունը միայն պոեզիան է: Արձակը գրականության մեջ տեղ ունի սոսկ իրենուն բովանդակած պոեզիայի շնորհիվ:

Արձակագրի մեջ բանաստեղծն առանձնապես չպետք է ուժեղ լինի»:
Ալյուտագավա Ռյունոսկե, «Տասը օրենք գրողների համար»

Ա.


Ներոսի խնդիրը բոլոր ժամանակների գրականության հանգուցակետն է, որովհետեւ ժամանակն իր մեջ խտացնող հերոսով միայն կարելի է իմաստավորել եւ պատմականորեն գրանցել տվյալ շրջափուլը: Այս հարցն ամբողջ սրությամբ դրված է գրականության առջեւ՝ ներգրավելով ոչ միայն գեղարվեստ ստեղծողներին, այլեւ տեսական-գեղագիտական-փիլիսոփայական միտքն ուղղորդողներին:

Ժամանակի ընթացքում հանրային կյանքի եւ գիտակցության հետ մեկտեղ փոփոխության է ենթարկվում նաեւ գրականության հերոսը: Գրականության հերոսի պատմական զարգացումը երկարատեւ ու աստիճանական փոփոխությունների անընդմեջ շղթի է, որ բանահյուսական ու գրական նյութերի շուրջ երեքհազարամյա ընթացքի միջով աստվածներից ու կիսաստվածներից, թագավորներից ու իշխանավորներից ահա եկել հասել է մինչեւ այսօրվա սովորական, առօրին մարդը:

Գրական հերոսի խնդիրը պայմանավորված է ժամանակի հանրային, պատմաքաղաքական եւ պատմամշակութային դրվածքով: Ըստ այդմ` իշխող գրական մեթոդն ու գեղագիտությունը ժամանակի տարբեր փուլերում, ընդհանուր գաղափարական հիմքի պահպանումով հանդերձ, դրսեւո-

րում են մրբերանգային առանձնահատկություններ` առաջ մղելով ժամանակի պատմական տարբեր փուլերին հատկանշական հերոսի նկարագիր:

Այսպես` խորհրդային գրականությունը թեւ ընդգրկում է պատմական կարճ ժամանակաշրջան, այնուամենայնիվ, պայմանավորված ժամանակի գլխավոր իրադարձություններով, փոխվել են այդ հերոսին ներկայացվող գաղափարական պահանջները: Քաղաքացիական կյանքի պատմությունն ստեղծում է այդ պատմության զարգացման ընթացքին հատկանշական կերպարներ: Խորհրդային իրականության առաջին տարիներին գրականության գլխավոր հերոսը հեղափոխականն էր` քաղաքացիական պատերազմի մասնակիցը: Այնուհետեւ` 1920-ականներին, այդ հերոսը դառնում է տնտեսությունը կարգավորող, հանրային մոր հարաբերություններ ձեւավորող, անցյալի մնացուկները հաղթահարող կուսակցական գործիչը: 1920-ականների վերջերին Հարություն Սուրխաթյանն այդ հերոսի մասին գրում էր. «Պրոլետարական գրողի գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի վերարտադրել մեր օրերի առաջավոր հերոսին, սոցիալիստական հասարակական շինարարին, սակայն առանց աչքաթող անելու նրա ունեցած կապի բազմաթիվ թելերը իր միջավայրի հետ, եւ այն, որ այդ հերոսը, օժտված լինելով պրոլետարիատի



բազմաթիվ դրական կողմերով, ազատ չէ նաեւ անցյալից ժառանգած քննադատելի մի շարք գծերից» (Հ. Սուրխաթյան, *Հետ-հոկտեմբերյան հայ գրականություն, Թիֆլիս, 1929, էջ 41*):

1930-ականներին այդ հերոսը դառնում է երկրի տնտեսությունը սոցիալիստական հիմքերի վրա կառուցող, կոլեկտիվացումն ու երկրի ինդուստրացումը ղեկավարող, սոցիալիստական շինարարությունը ձախողողների դեմ անձնագոհորեն պայքարող պետական-կուսակցական գործիչը: Պատերազմի տարիներին այդ հերոսը հայրենիքի համար կռվող զինվորն էր, զինվորին քաղաքական հասունության կոչող քաղցրեկը: Պատերազմից հետո` ավերված տնտեսությունը վերականգնող մախկին զինվորը, որ այժմ դառնում էր կոլտնտեսության մախագահ, որեւէ հիմնարկության ղեկավար կամ գաղափարական աշխատող:

Այս հարցերի հետ մեկտեղ, որոնք առնչ-

հատկությունները:

Երբեք չմոռանա՞մք` խորհրդային իրականության պայմաններում միշտ եղել է երկու գրականություն. մեկը այն, որ կատարում էր պետական-պաշտոնական գաղափարական հանձնարարությունները, մյուսը` համեմատաբար ազատ եւ հեռու այդ հանձնարարությունների պահանջատերը լինելուց, ինչն աստիճանաբար վերածվեց գաղտնի կամ բացահայտ ընդդիմության: Այսինքն` խորհրդային գրականությունը մշտապես ունեցել է մի քանի երես` արտաքին` պաշտոնական, ներքին` ոչ պաշտոնական, ի վերջո, ընդդիմադիր:

1950-ականների վերջերին եւ հատկապես 1960—1970-ականներին նկատելի անցում է կատարվում դեպի չգաղափարականացված, առօրեական, սովորական, շարքային մարդու պատկերումը, որը, ըստ էության, աչքի չի ընկնում մեծագործություններով ու հերոսություններով: ➔ էջ 6

ՀԱՅ ԻՄԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՐՎԵՍԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ ԻՄԱՈՒՆԷԼՆԵ



Եր ազգը պատմության քառուղիներում իր բազմահազարամյա երթի ընթացքում տվել եւ շարունակում է տալ բազումբազմաթիվ մեծեր` հոգեւոր կյանքի տարբեր բնագավառներում: Նոր ու նորագույն շրջանի մեր այդ մեծերի ստեղծած արժեքների բնօրինակներն ու նրանց առնչվող իրերը (մեկտեղելու, պահել-պահպանելու, ուսումնասիրելու, հանրությանը ներկայացնելու եւ մատաղ սերունդներին իբրեւ օրինակ, իբրեւ կրթության ու դաստիարակության չափորոշիչ, իբրեւ կյանքի ու արարման ելակետ ծառայեցնելու նպատակով) ահա մեկ դար հայոց քաղաքամայր Երեւանում հանգրվանել են մեկ հարկի տակ` արվեստաշատ ու արվեստաբուխ մի գողտրիկ վայրում, որ կոչվում է Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան (ԳԱԹ):

Հիմնադրվել է այն 1921 թ.` իբրեւ Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծված պետական կոլտուր-պատմական թանգարանի պատ-

մագրական բաժին: Ըստ էության` գործել է 1922-ից` ղեկավարությամբ բանասեր, պատմաբան Երվանդ Շահագիզի (1856—1951). հայ մշակույթի ծերունագրող նվիրյալը Նոր Նախիջեւանից Երեւան էր բերել եւ թանգարանին հանձնել Մ. Նալբանդյանի, Գ. Պատկանյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Խալիպյանի, Ս. Շահագիզի արխիվները, Նոր Նախիջեւանի հայ գաղութի պատմությանը վերաբերող վավերագրեր, հնատիպ գրքեր եւ այլ նյութեր: Մինչ այդ` 1921 թ. հոկտեմբերին, Հովհաննես Թումանյանի միջոցով թանգարանին էր հանձնվել Սայաթ-Նովայի երգերի ինքնագիր տետրը` Դավթարը: Հետագա տարիներին Կոլտուր-պատմական թանգարանի պատմագրական բաժինը համալրվում է հայ դասական գրողների, գրական-մշակութային գործիչների ու հաստատությունների բազմաթիվ նյութերով եւ 1935 թ. մայիսի 16-ից առանձնացվում որպես ինքնուրույն գիտական հիմնարկ` Պետական գրական թանգարան անունով: Առաջին տնօրենը եղել է Խորեն Սարգսյա-

նը: Նույն թվականին թատերագետ Սարգիս Մելիքսեթյանի ջանքերով հիմնվում է նաեւ Երեւանի թատերական թանգարանը: Դրանից մեկ տարի առաջ Երեւանի կոմսերվատորիայում երաժշտական մի շարք ֆոնդերի ընդգրկմամբ բացվել էր Ռ. Մելիքյանի անվան կաբինետը: 1942 թ. հուլիսի 21-ից Գրական թանգարանը, դուրս գալով Լուսժողկոմատի ենթակայությունից, ընդգրկվում է Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի, ապա` Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմում` իբրեւ Լեզվի ու գրականության ինստիտուտի, այնուհետ` Գրականության ինստիտուտի մի ինքնուրույն բաժին: 1953 թ. մայիսից անցնում է Մշակույթի նախարարության իրավասության տակ` իբրեւ Հայաստանի պետական պատմական թանգարանի մի առանձին բաժին: 1954 թ. հոկտեմբերին Գրական ու Թատերական թանգարաններին եւ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական կաբինետի ֆոնդերի միավորմամբ կազմավորվում է Գրականության եւ արվեստի թանգարանը` մինչեւ 1963-ը գործելով Գիտությունների ակադեմիայի, այնուհետեւ` մինչ օրս` մշակույթի (հիմա` Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի) նախարարության իրավասության մեքենա: 1977 թ. թանգարանում հանգրվանում են նաեւ հայ կինոարվեստին վերաբերող ֆոնդերը: Մշակութային օջախը 1967-ից կրում է մեր ազգի անմահ մեծերից մեկի` Եղիշե Չարենցի անունը: Հաստատությունը 2011-ից ղեկավարում է գրող, գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, արվեստի վաստակավոր գործիչ, 10-ից ավելի գրքերի հեղինակ Կարո Վարդանյանը:

Գրականության եւ արվեստի թանգարանը` Հայաստանի Հանրապետության խոշորագույն մշակութային օջախներից մեկը, հիմնականում ընդգրկում է 18-րդ դարից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակաշրջանի հայ մշակույթի չորս խոշոր բնագավառներ` գրականություն, թատրոն,

երաժշտություն եւ կինո: Այս բնագավառներում նշված շրջանում հանդես եկած ու հետագիծ թողած գրեթե բոլոր հզոր դեմքերի անհատական ֆոնդերից բացի` թանգարանում պահպանվում են նաեւ հայագիտության երախտավորների, մշակութային հիմնարկների, կազմակերպությունների, կրթական, գիտական հաստատությունների ու խմբագրությունների ֆոնդեր, ինչպես նաեւ ամենատարբեր բնույթի հավաքածուներ: Ի դեպ, որոշ անհատական ֆոնդեր (ինչպես օրինակ` գրող, բանասեր Թ. Ազատյանի, երաժշտագետ Բաբսեղ Ղորդանյանցի) զուգակցված են ֆունդատորների հավաքածուներին: Այս հաստատությունում են հանգրվանել մասունքները մեր ոչ վաղ հոգեւոր անցյալի մեծերի, որոնցից մի քանիսն իրենց բնագավառների պատմությունը բաժանել են «մինչեւ»-ի եւ «հետո»-ի:

Թանգարանն ունի հազարից ավելի ֆոնդեր ու հավաքածուներ, որտեղ ընդգրկված են մոտ մեկ միլիոն թանգարանային առարկաներ` գեղարվեստական, գիտական, ազգագրական, հրապարակախոսական, մանկավարժական, հուշագրական երկերի ձեռագրեր, մամուլային, փաստաթղթեր, վավերագրեր, լուսանկարներ, նոտաներ, հրավիրատոմսեր, ազդագրեր, ծրագրեր, նվագարաններ, անձնական եւ բեմական իրեր, կահույք, կինոսարքավորումներ, կերպարվեստի գործեր, ձայնասկավառակներ, ձայնային եւ տեսաձայնավեճներ, գրքեր, մամուլ եւ սրբաբույր նշխարներ դարձած այլ իրեր, առարկաներ, որոնցով կերտվել են մեր պատմության որոշակի փուլի գրականության, արվեստի, մշակույթի վերելքն ու փառքը, որոնք տարբեր կերպ առնչվել են այդ վերելքին ու փառքին` դառնալով դրանց վավերագրերն ու լուռ վկաները:

Իր այս պաշարով` թանգարանը նշված ժամանակաշրջանի հայ գրականության, թատրոնի, երաժշտության եւ կինոարվեստի աշխարհի մեծագույն շտեմարանն է:

➔ էջ 7

Դոկտոր Գեորգ Աբգարյանը Եւ Նրա հայրենասնվեր գերդաստանը

Սկիզբը՝ թիվ 9—11


1912 թվին հայ ժողովուրդը մեծ Զայոց գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանը: Այդ նշանավոր տարելիցի առթիվ Յոզեֆ Մարկվարտը Վիեննայի «Հանդես ամսօրեայ»-ում հանդես եկավ հիմնարար ուսումնասիրությանը՝ իր հարգանքի տուրքը մատուցելու հայ ժողովրդի գրի եւ դպրության համա-րին: Այդ հետազոտության հիմնադրույթնե-րով երիտասարդ եռանդուն գիտնականը զեկուցում էր կարդացել դեռեւս 1902-ին Համբուրգում կայացած Միջազգային կոնգ-րեսում, որի համար 1904-ին արժանացավ Մոսկվայի Լազարյան ճեմարանի մրցա-նակին: Ահա Մարկվարտի բարձրագույն դրվատանքը. «Երբ մենք քննում ենք այն պայմանները, որոնց մեջ Մաշտոցն ու Սա-հակը իրենց ուժով եկեղեցական ու ազ-գային ինքնագիտակցության զարթոնքի հասցրին հայ ժողովրդին, եւ այս ամենը համեմատում ենք այն Դանայան պար-գելի հետ, որը ֆրանկ Պիպինը, քաղաքա-կան եւ եկեղեցական իշխանության բոլոր միջոցները իր ձեռքն ունենալով, ընծայեց գերմանական ժողովրդին, տեսնում ենք, որ Պիպինը եւ նրա զինակից Վինֆրիդը ողորմելի թզուկներ են երևում մտքի այդ երկու հսկաների հանդեպ»: Մարկվարտը «թզուկ» է անվանում Պիպին Կարճահասա-կին (*Պիպին III Կարճահասակ (714—768), Ֆրանկ-Կարոլինգյան հարստության առա-ջին թագավորը (751—768)*) նրա համար, որ նա գերմաներեն այբուբենի համար ընտ-րեց լատիներեն գիրը, որը գոյություն ուներ հազար տարուց ավելի վաղ (մ. թ. ա. V դ.) — իսկապես «դանայան (անպտուղ) պարգեւ»:

1962 թվի մաշտոցյան հոբելյանից ըն-դամենը կես դար անց մշակեց Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Եվ ահա գերմանացի մեծ հայագետին փոխադարձ հարգանք մատուցելով եւ կարծես նրան մաշտոցյան հոբելյանին մասնակից դարձ-նելու համար՝ Գեորգ Աբգարյանը վերստին թարգմանեց Զայոց այբուբենին նվիրված Մարկվարտի աշխատությունը՝ «Զայոց այ-

բուբենի ծագումը եւ ս. Մաշտոցի կենսագրությունը» վերնագրով (*«Մեսրոպ Մաշտոց» հոդվածնե-րի ժողովածու, ՅՍՍՐ ԳԱ, 1962, էջ 117—180*):

Յոզեֆ Մարկվարտի նկատ-մամբ նրա հիացմունքն առանձ-նակի ուժով դրսևորվեց գերմա-նացի մեծ հայագետի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրած հոդվածում (*Գ. Աբգարյան. Յոզեֆ Մարկվարտ (ծննդյան 100-ամյա-կի առթիվ)*, «Պատմաբանասի-րական հանդես», 1965, №2, էջ 149—156), որ գրված է գիտ-նականի եւ բեկտորիստի յուրա-տեսակ փայլուն ոճով, որն ինձ ուղեկցում է 1965 թվականից եւ տպավորված է հիշողությանս մեջ այնպես, որ Գեորգ Աբգարյանի ծննդյան 100-ամյա-կի առթիվ սույն անդրադարձը գրելիս կարիք չուներ կրկին թարգմանելու հիշո-ղությանս մեջ նույնիսկ մամրամասները: Դրանց մեջ խորաքանդակի պես դրոշմված էր այն ժամանակվա գերմանական ռայխի թրջանոլության եւ գերմանական գիտական մտքի վեհության հակադրությունը, որ ար-տահայտված է գրեթե այլաբանություն հի-շեցնող երկու ցայտուն վկայություններով՝ «Պրուսիայի Վիլհելմ կայսրը (*Վիլհելմ II-ը եղել է Գերմանիայի կայսրը եւ Պրուսիայի թագավորը եւ զահակալել է 1888—1918 թթ.*) սովորություն ուներ հազնել թուրքական տարազ, իսկ XVIII դարի ֆրանսիացի մեծ լուսավորիչ Ժան-ժակ Ռուսոն սիրում էր կրել հայկական արխալուղ»: Եվ այս ֆոնի վրա ցուցադրվում է գերմանացի մեծ հայա-գետ Մարկվարտի հայագիտական բազմա-բեղուն ժառանգությունը, որի մեջ ցայտուն դրսևորվել են հայ ժողովրդի ստեղծած բազմադարյան դպրության եւ մշակույթի խորամուխ ընկալումը եւ բարձր դրվա-տանքը:

Թվում էր, թե Մարկվարտի «Die Provinz Parskahajk» աշխատության հայերեն թարգ-մանությունը, վերծանումը եւ բազմակողմա-



նի քննությունն ավելի քան բավարար պետք է լինեին արդեն քառասունն անց բազմա-փորձ գիտնականի համար՝ թեկնածուական դիսերտացիայի հայց ներկայացնելու, բայց Գեորգ Աբգարյանն այդ ասպարեզն ընտ-րել էր մի ավելի մեծ գիտական սխարանքի համար, եւ դրանից երկու տարի անց նա պաշտպանության ներկայացրեց հայ մատե-նագրության մի ավելի պրոբլեմատիկ պատ-մական երկի թեմա՝ «Սեբեոսի պատմություն-ը եւ Ամանունի առեղծվածը»: 1965 թվին Մատենադարանի գիտական խորհուրդը այդ դիսերտացիայի համար նրան շնորհեց ոչ թե թեկնածուի, այլ միաժամանակ բանասի-րական գիտությունների դոկտորի գիտա-կան աստիճան, ինչը հազվագյուտ երեւույթ է, եւ դա հաջողությամբ հաստատվեց նաեւ ՍՍՄԷ բարձրագույն որակավորման հանձ-նաժողովի որոշմամբ: 1965 թվին առանձին գրքով՝ նույն վերնագրով, այն լույս ընծայեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրա-տարակցությունը՝ 252 էջ ծավալով: Բուն «Պատմություն Սեբեոսի» մատյանը, հա-րուստ ծանոթագրություններով եւ բազմա-լեզու հեղինակների մանրամասն քննության վկայակոչումներով, դոկտոր Գ. Աբգարյանը հրատարակեց 1979 թվին՝ 466 էջ ծավալով:

Գեորգ Աբգարյանի աշխատությունները նվիրված են հայ միջնադարյան գրականու-

թյանը, ձեռագրագիտությանը, հայ-հունա-կան, հայ-վրացական, հայ-սլավոնական, հայ-ֆրանսիական, հայ-գերմանական մա-տենագրական աղբյուրներին, եվրոպական հայագիտության պատմությանը: Աբգարյա-նը գերմաներենից հայերեն է թարգմանել Յոզեֆ Մարկվարտի, Հանս Վալտեր Պոլի, Լինոս Բենակիսի եւ այլոց հայագիտական ուսումնասիրությունները, լուսաբանել է մի-ջին գերմաներենում արձարծված հայկական թեմաները, ինչպես եւ գերմանացի լեզվա-բան Կարստի միջին հայերենի բառարանը: Նա սեւեռուն հետաքրքրություն էր տածում եվրոպական հայագիտության մշակավոր դեմքերի եւ հատկապես գերմանացի հա-յագետների ուսումնասիրություններին. լայ-նախոհ գիտնականի տեսադաշտում էին XX դարի Զայոց Մեծ եղեռնի մասին գեր-մանացի հեղինակների գրական երկերն ու հրապարակումները: 1919 թվին 3. Մարկ-վարտը գրեց «Հայ ազգի ծագումը եւ վերած-նունդը» (*J. Markwart. Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin 1919*) աշխատությունը, որտեղ «Նշա-նաբանի զորությամբ են հնչում մարդասեր գիտնականի հետեյակ խոսքերը՝ ընդդեմ հայ ժողովրդի ջարդարար Աբդուլ Համիդի. «Մեր սերունդներն անտարակույս պետք է ամոթից շառագունեն, երբ պատմության գրքերում կարդան կամ հարկադրված լինեն իրենց հա-րեաններից լսել այն մասին, որ Աբդուլ Համի-դը, homo sapiens-ի այդ ցցուն հատանմուշը, համարձակություն է ունեցել իրեն կոչել գեր-ման ժողովրդի բարեկամ» (*Գ. Աբգարյան. 3. Մարկվարտ. մահվան 100-ամյակի առթիվ, 1965, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2, էջ 151*): Մարկվարտի այս գիրքը, որ դատապարտում է 1915—1916 թվերի ավե-լի քան միլիոնուկես հայերի ցեղասպանու-թյունը, լույս է տեսել 14 տարի ավելի վաղ, քան Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառա-սուն օրը» պատմավեպը (*Franz Werfel. Die vierzig Tage des Musa Dagh. Erstausgabe in zwei Bänden: Band 1: Das Nahende. Zsolnay, Berlin 1933; Band 2: Die Kämpfe der Schwachen. Zsolnay, Berlin 1933. ➔ էջ 7, 8*



Սկիզբը՝ թիվ 9, 11

Մ. Ավետիսյանը, խորությամբ քննու-թյան առնելով հեղափոխական շարժման ուղիների վերաբերյալ «Հնչակի» եւ «Արմե-նիայի» ունեցած դիրքորոշումները, խիստ քննադատում է հնչակյան կուսակցության օրգանին, որի կարծիքով «հայերի միջեւ իսկ անյաջող շարժումները կը նպաստեն յեղափոխական գաղափարի տարածա-նը եւ ուժի աւելնալուն, եւ քանի որ գործ-նական օրինակը աւելի շուտ կը ցնցէ ան-տարբեր մնացած խաւերը եւ հալածումը տարածում է, ուրեմն որքան շատ զոհեր, այնքան ալ բազմապատիկ նոր հաւատա-ցեալներ» (*«Արմենիա», 1894 թ., թիվ 2*): Այն, «Հնչակ» պարբերականի մնաց մոտեցում-

ՄԿՐՏԻՉ ԼՎԵՏԻՄՅԱՆ

ները, թե միջեւիսկ անհաջող շարժումները ժողովրդին կվարժեցնեն կռվին ու զոհին, հեզնական է նկատվում արմենականների առաջնորդի կողմից: Դա էլ, ի վերջո, հաս-կանալի ու տրամաբանական է, քանզի չի կարելի ամեն ջարդ ու կոտորած, ամեն մի անհաջողություն, յուրաքանչյուր դիրքի կո-րուստ մի նոր քայլ համարել դեպի առաջ, դեպի նպատակակետ:

Անդրադառնալով իրենց պարբերականի որդեգրած ուղեգծին՝ Մ. Ավետիսյանը նշում է, որ «Արմենիան» սկզբից եւեթ խաղաղ դիվանագիտական միջոցների արդյունա-վետ լինելու մտքի դեմ կռվելով եւ «ատոր հետ ալ քարոզելով, որ առանց բռնի մի-ջոցների, առանց յեղափոխութեան կարելի չէ ազատութիւն ձեռք բերել, պարզեց նաեւ այն միտք, թե ամեն մի յեղափոխութեան եւ ապստամբութեան իրենց նպատակին հաս-նելուն համար անպատճառ պէտք է բարո-յական եւ նիւթական ուժի նախապատրաս-տութիւն» (*Մույն տեղում*):

Սա, անշուշտ, շատ կարեւոր, իրատե-սական դիտարկում է, քանզի այնպիսի մի լուրջ ձեռնարկ, որպիսին արեւմտահայու-թյան ազատագրության գործն էր, առանց նախապատրաստական վիթխարի աշ-խատանքների, առանց նյութական եւ բա-րոյական բոլոր ուժերի գործադրման, չէր կարող ապահովել հաջողություն: Առանց այդ նախապատրաստության՝ եղած ապս-տամբական շարժումը «...կրնայ առ-նուազն ժողովրդի շղթաները փոփոխել ուրիշ շղթաների հետ: Ազգերը ապստամ-

բութեամբ կրնան եւ ազատուիլ եւ ջնջուիլ» (*Մույն տեղում*):

Հետագայում գրած հոդվածներում Ավե-տիսյանը հիմնավորում է այն դիտարկումը, որ հեղափոխական ձեռնարկներն ամեն տեղ եւ ամեն ժամանակ միօրինակ օգտա-կար չեն: Այն «ինչ որ տեղ օգտակար է կա-մաւոր դրկել, այն ինչ որ տեղ վնասակար. մէկ օր ստիպողական է գէնքի դրամ տալը, միւս օր կրնայ դեռ անօգուտ եւ յետաձգելի նկատուիլ, մէկ տեղ շարժում պէտք է անել, մի ուրիշ տեղ լուռ մնալ. ասպատակային խումբեր կրնան մի ժամանակ օգտակար լինել, ուրիշ ժամանակ անպայման վնասա-կար» (*«Արմենիա», 1894 թ., թիվ 20*):

Արմենական կուսակցության ղեկավարը խիստ քննադատական մոտեցում հանդես բերեց Հայկական հարցի, Արեւմտահայաս-տանում նախանշված բարենորոգումների հանդեպ օտար միջամտությունների առն-չությամբ: Հատկապես սուր քննադատու-թյան է ենթարկում եվրոպական դիվանագի-տության եւ մամուլի հարուցած աղմկայից վեճերը հայոց կոտորածների շուրջ եւ այդ բոլորը համարում լոկ ձեւական (ֆիկտիվ) մի բան՝ որպէս եվրոպական թերթերի ըն-թերցողների ծանծրույթը մեղմելու միջոց: Ընդ որում՝ նա շեշտադրում է, որ հայերը միշտ էլ միամտություն են ունեցել եվրոպա-կան մամուլի երբեմնի համած աղմուկներն իբրեւ պետությունների վճիռներ ընդունելու:

Նրա կարծիքով՝ Լոնդոնի, Պետերբուրգի կիսապաշտոնական թերթերի հրապարա-կումներին «Եթէ մայուէր, մինչեւ այսօր 5

անգամէն աւելի եւրոպեան մի բանակ Հա-յաստան իջած պիտի լինէր 61-րդ յօդուածը գործադրելու համար: Խորհրդարանական հայասէր ճառերը եթէ հաշուի գրուէին, Սուլ-թանը վաղուց պէտք էր իր սնտուկներ կա-պել տար Դամասկոս կամ Մեքքէ քաշուկելու համար» (*«Արմենիա», 1895 թ., թիվ 86*):

Մ. Ավետիսյանը հաստատապես համոզ-ված է, որ եվրոպական մամուլով եւ դիվա-նագիտական ճառերով հնչած այդ կարգի բոլոր սպառնալիքները «միայն պիտի ծա-ռայեն Անգլիային աւելի եւս հաստատուելու Եգիպտոսի մէջ, Ռուսիային՝ իր պատերազ-մական տուգանքների ստացումը փութաց-նելու եւ Ալմանիային ալ՝ երկաթուղիի արտօ-նութիւններ վաստակելու» (*Մույն տեղում*):

Նա հեզնում է այն միամիտներին, որոնք եվրոպական մամուլից ու դիվանագիտու-թյունից այնպիսի հույսեր ու հավատ են փայփայում, որ թվում է, թե մեր կողմից միայն «իրենց դիմելն է մնացել, Եւրոպա կամ Ռուսիա գթութեան ձեռքեր բացած մեզ կսպասեն եւ Սասունի վրեժը քաղա-բակիրք աշխարհը պիտի հանէ թիւրքէն» (*Մույն տեղում*):

Եվ վերստին շեշտադրումը կատարվում է սեփական ուժերին ապավինելու ռազ-մավարության վրա. «Սակայն հարցունեք մի անգամ, թե մենք մեր արիւնակիցների վրայ ինչ գուր ունեցանք, անոնց չկոտո-րուելու միջոցներ տուինք, որ այժմ ալ կա-րենայինք աւելի մեծ բաներ յուսալ օտար եւ նիւթապաշտ Եւրոպաէն» (*Մույն տեղում*):

Զարեհ Որբունու պարմվածքները



Սկիզբը՝ թիվ 8—10

Ղյուղի քանդմանը զուգահեռ փոխվում էին նաեւ մարդկային հատկանիշները, սովորույթները, բարքերը: Դատարկվում էր ոչ միայն բնակավայրը, նաեւ մարդու հոգին: Արհեստավորը ցավ է ապրում, նա այն եզակիներից է, որոնք չեն լքել իրենց ծննդավայրը, բայց ներքուստ չեն էլ կարող մեղադրել լքողներին, քանի որ նրանցից շատերը կեցության խնդրի առաջ են կանգնած:

Նկատենք նաեւ, որ խորհրդահայ ու սփյուռքահայ գյուղագրությունն ուներ հստակ տարբերություն: Առաջինը հայ գյուղացու ավանդական հատկանիշներին ավելացնում էր հեղափոխությանը նախոր-

դող ու հաջորդող շրջանի հայ գյուղացու կյանքի ու հոգեբանության մոր հատկանիշները, շարունակում էր իր հողի վրա գոյությունը պահպանող անհատի կենսափոխության գեղարվեստական կերպավորումը, երկրորդը բերում էր սոսկ անցյալ միջնէւ 1915 թ. գյուղի կյանքի պատկերը, քանի որ արեւմտահայ գյուղն այլեւս գոյություն չուներ: Ստեղծվում էր բացառապէս վերհուշի կամ կարոտի գրականություն:

Գրականությունն այն հայելին է, որում իրենց արտացոլանքն են գտնում յուրաքանչյուր ժամանակաշրջանի պատմական ամենակարեւոր իրադարձությունները: Այդպիսին է եղել միշտ մեր գրականությունը՝ Ավարայրից սկսած մինչեւ Արցախի ազատագրական կռիվներ: Այդպէս էր նաեւ 19-րդ դարի վերջում. այդ ժամանակ էր, որ հայ գրականության մեջ սկիզբ առավ հայկական կոտորածների թեման: Հատկապէս արեւմտահայ շատ գրողներ իրենց ստեղծագործությունների առանցքը դարձրին ջարդերի նկարագրությունները՝ հնչեցնելով ազգային-

ազատագրական շարժման ու պայքարի կոչերը: Սակայն եղեռնապատումի գրականությունը, որպէս օրինակ ունենալով մինչեւ 1915 թ. ստեղծված գրական այդ ժառանգությունը, ամբողջացավ ու ծավալվեց, բնականաբար, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1920—1930-ական թթ. եւ հետագա տասնամյակներին: Ընդհանրական ըննության առնելով այս գրականությունը՝ կարող ենք առանձնացնել նրա գլխավոր ուղղությունները. նախ նահանջի գրականությունը, որ պատկերում էր սփյուռքահայության կյանքը, նրա սոցիալական վիճակը եւ հատկապէս ունեցման, նահանջի տագնապները (Շահան Շահնուր, Զարեհ Որբունու, Զրաշ Զարդարյան եւ ուրիշներ), ապա կարոտի

գրականությունը, գյուղագրությունը, որ նահանջեռնյան գյուղի վերակենդանացումն էր (Համաստեղ, Հակոբ Մնձուրի, Վազգեն Շուշանյան, Բենիամին Նուրիկյան, Վահե Հայկ եւ ուրիշներ):

19-րդ դարի 20-ական թվականների սփյուռքահայ գրականության մեջ ֆրանսահայ երիտասարդ գրողներ Շահան Շահնուրի, Զարեհ Որբունու, Զրաշ Զարդարյանի, Նիկողոս Սարաֆյանի, Նշան Պեշիկթաշլյանի եւ ուրիշների կողմից ձեւավորվեց նահանջի գրականությունը, որի համար հենք հանդիսացան «Մենք» գրական շարժումը եւ Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը: Նահանջի գրականությունը միտված էր նահանջի դեմն առնելու, սթափեցնելու օտար ավերումը դեգերող հայրերին, նրանց հետ բերելու ազգային ակունքներ:

Շ. Շահնուրն իր վեպով դարձավ նահանջի գրականության դրոշակիրը: 1929 թ. նա հրատարակեց իր «Նահանջը առանց երգի կամ պատկերազարդ պատմություն հայոց» վեպը: Առաջին վերնագրով Շահնուրը հուշում է վեպում պատկերվող ազգային նահանջը, իսկ երկրորդ վերնագրով, ինչպէս իրավացիորեն նկատել է սփյուռքահայ գրականագետ Ժ. Դանիելյանը, «Շահնուր հայոց պատմութիւնը կու տա մեր ժամանակներուն չգերազանցուած գեղարուեստական ոճով մը» (*Շահնուրեան ընթերցումներ, Բեյրութ, 1933, էջ 156—157*):

Որբունու «Հալածվածները» վիպաշարի ընդհանուր խորագիրը ճշգրիտ է բնութագրում նրա ստեղծագործության, նաեւ պատմվածքների թեմատիկ ու գաղափարական ուղղվածությունը: Գրողն իր ամբողջ ստեղծագործության մեջ ուշադրությունը բեւեռում է կապիտալիստական աշխարհի զոհերի, կյանքի կողմից հալածվածների ճակատագրերի ըննությանը: Նրա հերոսներն ամենատարբեր ազգությամբ են պատկանում, բնականաբար նաեւ հայեր են: Սփյուռքահայ գրողին, անշուշտ, առաջին հերթին պիտի զբաղեցներ իր ազգակիցների ճակատագիրը, հայրենի տանից փախստական դարձած, օտար աշխարհ ընկած հայ ընտանիքների ու անհատների՝ կյանքի կողմից հալածվածների ճակատագիրը:

Որբունին իր ստեղծագործությամբ այն գաղափարն է արտահայտել, որ ազգային ինքնաճանաչման հասնելու համար նախ պետք է ճանաչել սեփական թերությունները: Հայոց պատմության բազմաթիվ էջեր են ողողված արյունով ու լացով: Ազգային վերահաս աղետը մոռանալ հնարավոր չէ: Ասել է թե՛ ողբերգական անցյալը շարունակել է հայ մարդու համար մնալ օրվա խնդիր: Այդ խնդրով էին պայմանավորված հայ մարդու վաղվա օրն ու ճակատագիրը, իր պատմվածքների կերպարների հուսահատական վիճակը հայրենիքից հեռու:

Որբունու հերոսներն էլ, ինչպէս Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի հերոսները, հեղինակային խոհերի ու գաղափարների կրողներ են՝ ընդհանրացված կերպարներ: Սուրենն ազգային ասելիքի կրողն է: Սուրենն սկսում է մի գրույց, որի միջոցով գրողը վերհանում է պատմության սխալներն ու թերությունները: Նրա խոսքերը փրկության ավեր որոնող մարդու մտահոգությունների արդյունք են, որոնք հաճախ հնչում են նաեւ որպէս դատապարտումներ: Այդպէս է նաեւ Որբունու հերոսների դեպքում, ինչպիսիք, օրինակ, «Տիտղոսի արձան» պատմվածքի հերոս Մելքոնն է:

Որբունու կերտած բոլոր կերպարներում առկա են հալածական մարդու հոգեբանությունն ու աշխարհընկալումը: Հերոսների հոգեկան այդ անկայուն վիճակը դրսևորվում է տարբեր վիճակներում:

«Տիտղոսի արձանը» պատմվածքի հերոս Մելքոնը քսան տարուց ավելի է՝ ապրում էր Ֆրանսիայում՝ Սրվակների փողոցում. «Թե ուրկէ՛ առած էր սրուակներ անունը, շատ զբաղեցուցած էր Մելքոնի միտքը՝ որ նախապատուութիւն տրւած ըլլալով Հայաստանի եւ իր շուրջի ժողովուրդներու պատմութեան, քսան տարի վերջ դեռ այդ հարցականը թաղուած կը մնար մտքին խորքը... Օրուան ամէն պահերուն աղմկոտ էր Սրուակներու փողոցը հացագործներով, աժան ճաշարաններով, գինետոններով, սրճարաններով, զարեջրատոններով, լուսացարաններով, նկարեղէնի եւ բանջարեղէնի կրպակներով, պանդոկներով: ➔ էջ 6

ՀԻՄՆԱԲԱԿԱՆՈՒՄԸ

Մ. Ավետիսյանը քաղաքական, ռազմավարական բոլոր կարեւոր հարցերում համակարծիք եւ համախորհուրդ էր իր ուսուցչի՝ թերթի խմբագրապետ Մ. Փորթուգալյանի հետ: Ինքը՝ խմբագրապետը, մեծապէս վստահում էր իր աշակերտին եւ նրան էր հանձնարարում խմբագրական առաջնորդողների դեր կատարող հրապարակումներին նախապատրաստումը:

Իր վերջին հոգվածներից մեկում՝ հրապարակված 1896 թ. մայիսի 16-ին («Յուսահատիլ թէ մորեն սկսիլ») արձեանականների առաջնորդն իրեն հատուկ իրապաշտությանը նշում է, որ Տաճկահայաստանը սգի, տվի եւ ավերման մեջ է, եւ այդ վիճակը օրըստօրե ավելի կսաստկանա. «...զաղթականութեան երամներն ամեն գաւառներէ անդադար կը չուեն հայրենի երկիր բուերի եւ մարդագազանների թողլով... թիրք կառավարութիւնը Հայաստանը հայերէ դատարկելու այլ եւս մի արգելք չտեսներ» (*«Արմենիա», 1896 թ., թիվ 81*): Նրա խորին համոզմամբ, այդ ամենը պլանավորված է եւ կատարվում է Օսմանյան կայսրության բարձրագույն իշխանությունների հովանավորությամբ ու հրահրումով: Ահա թե ինչու հրապարակախոսն աներկբա պնդում է, որ օսմանյան կառավարությունը հայ հեղափոխականների ուրվականը չէ, որ հալածում ու հետապնդում է, այլ «ուղղակի իր համար անշահ եւ վտանգաւոր համարելով հայ տարրի գոյութիւնը, որոշ յատակագծով բնաջնջելու գործը առաջ կը տանի» (*Մույն*

տեղում): Սա շատ ուշագրավ պնդում էւ հիմնավորում է, որը ցույց է տալիս ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի լրջության ու հասունացածության աստիճանը:

Ուրեմն, 19-րդ դարի 90-ական թվականների կեսերին հայ հասարակական-քաղաքական գիտակցության մեջ արդեն արմատավորվում էր այն միտքը, որ հայ ժողովրդի դեմ մահու եւ բնաջնջման պլաններ են մտահղացվում եւ իրագործվում թուրքական բարձր իշխանությունների եւ ամենաթուրքա շահի դիմաց:

Մ. Ավետիսյանը, հանգամանքների թելադրականով, 1895 թվականի սկզբին վերադարձել էր Վան եւ ամմիջակամորեն դեկավարում էր թուրքական ջարդարարների դեմ ինքնապաշտպանություն կազմակերպելու աշխատանքները: Նրա՝ Վան ժամանելուն պէս կազմակերպչական նախապատրաստական աշխատանքները մտան եռուն փուլ: Վանում անօրինակ ոգեւորություն է առաջանում թէ կուսակցական ընկերների ու համակիրների եւ թէ ժողովրդի շրջանում: Նա, գիշեր-ցերեկ շրջելով թաղից թաղ, տնից տուն, մոր խմբեր է կազմավորում, իսկ շաբաթը մէկ խմբերը տանում Վարագա լեռ՝ մշանառության եւ զինավարժության փորձերի համար: Արմենականների առաջնորդի տունը պաշտոնական կենտրոնատեղի է դառնում ժողովների եւ խորհրդակցությունների համար, ուր հավաքվում էին զինվորական մասի վարիչներն ու Վանի մտավորական ընտրանին:

Վանի ինքնապաշտպանությունն սկսվեց 1896 թ. հունիսի 3-ից եւ տեւեց մէկ շաբաթ: Ինքնապաշտպանության ոգին եւ փաստացի ղեկավարը Մ. Ավետիսյանն էր, որն էլ առաջնորդեց ինքնապաշտպանական խմբերի անցումը դէպի պարսկական սահմանը: Սակայն եվրոպական հյուպատոսների դավադիր մեղսակցությամբ այդ խմբերը հայտնվեցին թուրքական եւ քրդական խաժամովի աքցանում եւ գրեթէ գլխովին ոչնչացվեցին (*Եր. Տէր-Սկրտչեան, Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, հատ. 1, 1960 թ., էջ 464*):

«Արմենիա» պարբերականը 1896 թ. օգոստոսի 22-ին հրապարակել էր խմբագրական գաղափարական: Մեջտեղում նահատակ Ավետիսյանի դիմանկարն էր՝ առնված սգո երիզների մեջ: Ընթերցողներին գուժելով իր նախկին աշխատակցի կորստի մասին՝ պարբերականը նշում է, որ հայ հեղափոխությունը տասնյակ տարիներ ի վեր շատ մեծ կորուստներ ունեցավ, բայց «...ոչ մի կը հաւասարի ներկայ կորուստին: Այո, շատ կորիճներ նահատակուեցան ցարդ, ոճանք գիտակցութեամբ եւ ոճանք անգիտակցաբար թելադրուելով ուրիշներէն. բայց ոչ մին կարող է համեմատուիլ մեր սիրելի դիւցազնի հետ» (*«Արմենիա», 1896 թ., թիվ 7*):

Այնուհետեւ ասված է, որ Վանում նրանով կսքանչանային ոչ միայն հայերը, Վանի ողջ հայ հասարակությունը, այլեւ օտարները, մոյմիսկ հյուպատոսներն ու խաղաղասեր նահանգապետը, որոնք նկատելով



«Աւետիսեանի խոհեմ վարուողութեամբ եւ իր կազմակերպեալ խումբերով օրինակելի կարգապահութիւնն ու խաղաղասիրական ձգտումները, յոյս կը ներշնչէին Վանայ ընդհանուր կոտորածէ ազատ մնալուն» (*Մույն տեղում*):

Հայ հեղափոխական շարժման տարեգրության մեջ Մկրտիչ Ավետիսյանի կերպարը բացառիկ է որպէս սրի հերոս եւ որպէս խոսքի հերոս, առաքինություններ, որոնցում նա հավասարապէս անգուգական էր:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Վաթսուկականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը



← էջ 3

Գրականության նյութ են դառնում նրա անհատական կյանքը, խոհերն ու հույզերը: Նյութի փոփոխությունը փոխում է նաեւ գրականության հերոսի տեսակն ու նկարագիրը: Գրականության հիմնական նպատակը դառնում են արդիական նյութի գեղարվեստական յուրացումն ու ժամանակակից հերոսի կենսահոգեբանական առանձնահատկությունների բացահայտումը:

Այս կողմնորոշումը մղում է առաջադրելու մի շարք հարցեր. ի՞նչ է ժամանակի, այսինքն՝ 1960—1980-ականների գրականության հերոսը, ի՞նչ տվյալներով է աչքի ընկնում, ինչքանով է կրում կյանքի կենդանի լիցքերը, ինչպե՞ս է իր մեջ կրում ժամանակը, ի՞նչ հարցեր են մտահոգում նրան, ինչպե՞ս եւ ինչքանով է իմաստավորում եւ ընդհանրացնում կյանքը:

Այս հարցերին միանգամից պատասխանելը եւ անհնարին է, եւ սխալ: Այդ հարցերի պատասխանը պետք է տա գեղարվեստական արձակը:

Ժամանակն ստեղծում է աշխարհընկալման միասնական հոսանքներ, այսպես կոչված՝ սերնդային միասնական հոգեբանություն, ինչն ակնհայտ է արձակի այն ներկայացուցիչների ստեղծագործության մեջ, որոնց ասում ենք 60-ականների սերունդ, այսինքն՝ գրողներ, ովքեր խորհրդա-

յին իրականության մեջ գրական ասպարեզ մտան 1960-ականների շատ ու շատ կողմերով բարենպաստ ժամանակներում, այլ կերպ՝ Ստալինի պաշտամունքի վերջնական հաղթահարման, խրուշչովյան ձնհալի, գաղափարական սահմանափակումների թուլացման եւ համեմատաբար ազատ մտածողության երկար սպասված տարիներին:

1960-ականների սերունդը բերեց գրական հերոսի իր նախասիրած տարբերակը, կյանքի իր ըմբռնումն ու կյանքի խորքերի բացահայտման իր սկզբունքները: Տարբեր են նաեւ գրական հնարավորությունները, եւ անհնար է մեկ ընդհանուր հայտարարի բերել գրական այն վաստակը, որ ստեղծել են մի կողմից բուն 1960-ականների սերնդի ներկայացուցիչները՝ Զորան Մաթևոսյանը, Վարդգես Պետրոսյանը, Զորայր Խալափյանը, Պերճ Զեյնունյանը, Մուշեղ Գալշոյանը, Զովհաննես Մելքոնյանը, Աղասի Այվազյանը, Ռուբեն Զովսեփյանը, Նորայր Աղալյանը, Վահագն Գրիգորյանը, Ալեքսան Մեխակյանը, մյուս կողմից՝ ավելի վաղ հանդես եկած եւ այս շրջանում իրենց լիարժեքորեն բացահայտած ավագները՝ Սերո Խանգաղյանը, Մկրտիչ Սարգսյանը, Անահիտ Սահինյանը, Ստեփան Ալաջա-ջյանը, Խաժակ Գյուլնազարյանը, Զովհաննես Դուկասյանը, Միքայել Շաթիրյանը, Գեղամ Սեւանը, Աբիգ Ավագյանը, Վալտեր

եւ Ռաֆայել Արամյանները, Բաղիշ Զովսեփյանը եւ ուրիշներ:

Կենսարկերք միայն առաջին խմբի գրողների երկերը:

Մինչ այդ անհրաժեշտ է պարզել եւս մեկ հարց՝ կենսական ի՞նչ նյութ է շրջանառության մեջ դրվում այս գրողների կողմից, ինչով է պայմանավորված գրական հերոսի նկարագիրը: Այնուհետեւ հարկավոր է այդ կերպարը հարաբերության մեջ դնել իրականության կենսական հարստության հետ եւ ճշտել՝ կենսական նյութի գրական յուրացման ի՞նչ սկզբունքներ են գործում ժամանակակից արձակում, եւ արդյո՞ք ամբողջությամբ է հայտնաբերված ժամանակի հերոսի լիարժեք կերպարը, իսկ եթե չի հայտնաբերված, ապա ի՞նչ է նա, ի՞նչ վիճակներ է ապրում, եւ ի՞նչ կենսափոխակերպություն է հատկանշական նրան:

Գրականության մեջ կյանքի զարգացման աստիճանի ապահովումը հիմնականում պայմանավորված է այդ իրականությունն իր մեջ կրող անհատի եւ համապատասխան նյութի առկայությամբ: Զերոսի տեսակի, նրա ներաշխարհի բացահայտման սկզբունքների, նրա ասպարեզ վիճակների ու հարաբերությունների գեղարվեստական յուրացմամբ էլ ճշտվում են գրողի ասելիքն ու դիրքորոշումը: Այս առումով ճիշտ է Անատոլի Բոչարովը. «Նոր արվեստը երբեք չի սկսվում նոր ձեւերից, այլ միշտ՝ նոր հերոսից: Այս հայտնի ձեւակերպումը ցույց է տալիս ոչ միայն բովանդակության առաջնայնությունը ձեւի համեմատ, այն հերոսի կերպարի մեջ հաստատում եւ կիզակետում է հասարակական իրականության դիալեկտիկական միասնությունն ու հերոսականային հայեցակետը»: Զարցի դրվածքը հայ արձակին նվիրված հոդվածներից մեկում (1971) այդպես է ներկայացնում նաեւ Սերգեյ Սարինյանը. «Հիմնական հարցը, որ տեսական ու գործնական իր ամբողջ նշանակությամբ է առաջադրվում, գրականության արդիականությունն է: Խնդրի իմաստը տվյալ դեպքում համգում է ոչ միայն եւ ոչ այնքան պոետիկական ինչ-ինչ ձեւերի յուրացմանը, ինչպես ենթադրում են «նորարարության» որոշ երկրպագուներ, որքան թեմայի, գլխավոր հերոսի եւ գեղագիտական իդեալի որոնումներին» (Ս. Սարինյան, Քննադատությունը եւ գեղարվեստական զարգացումը, 1973, էջ 151):

Թվարկված գրողների շրջանառում նյութը բավականին հարուստ է ու բազմակողմանի. ընդգրկում է ժամանակակից գյուղն ու քաղաքը, 20-րդ դարի համամարդկային հետաքրքրություններն ընդհանրացնող, նաեւ տեղական նշանակություն ունեցող որոշ կարեւոր հարցեր, այսօրվա բարդ հոգեբանական կյանքով ապրող մարդն ու այդ մարդու հիշողության մեջ բեկված պատմությունը (հիմնականում 1915 թվական, Երկրորդ համաշխարհային պատերազմ): Նյութի այս ոլորտի մեջ ամեն մի գրող ստեղծում է իր նրբերանգը, ասելիքի վերարտադրման իր եղանակը:

Վաթսուկականների արձակում բավականին հաղթահարվել է սխեմատիզմը. չկան նախապես տրված կամ պարտադրված կաղապարներ, գրողի ընտրությունն ազատ է, իսկ վերարտադրման հնարավորությունը՝ անսպառ: Այս ազատության պայմաններում սխեմատիկ կերպարներից, ամեն ինչ համահարթեցնող ու ինքնուրույնությունը թուլացնող գաղափարական կարծրատիպերից անցում է կատարվում անհատականությունների պատկերմանը: Անձնավորությունը վերցվում է իր անհատական կյանքի համակցական կապերի մեջ, ինչը եւ նպաստում է տիպային դաշվածքից անցնելու հոսող կյանքի պատկերմանը, կյանքի հորդումը գրականության մեջ խարխուլում է պատրաստի կաղապարների շրջանակները. գրողներն իրենք են ստեղծում իրենց շրջանակները: Ստեղծագործական այս ազատությունը գնահատելի է գլխավորապես այն դեպքում, երբ արձագանքում է համրային տրամադրություններին, անհատի մեջ խտացնում ընթացիկ կյանքին հատկանշական այն խոր եւ բարդ հարցադրումները, որոնք, յուրաքանչյուրի մեջ ունեցած իրենց անհատական դրսեւորումներով հանդերձ, ունեն մեկ գլխավոր ակունք: Միայն այս պայմանով արդյունք կտա սխեմաների հաղթահարումը, հակառակ դեպքում գաղափարական կաղապարին կփոխարինվի անհատական կյանքի ձանձրալի փորփրումը, որ այլ բան չէ, քան մտավոր ճահիճ:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր


Զարեհ Որբունու պարմվածքները

← էջ 5

Այդ պանդոկներէն մեկում ձեղնա-յարկը կը բնակէր Մելքոն քսան տարիէ ի վեր, ու այդ փողոցը քիչ մը իր հայրենիքն էր եղած» (Չ. Որբունի, Վարձու սենեակ, Փարիզ, 1939, էջ, 313): Այդ փողոցից քիչ հեռու՝ Պոնաբարդ փողոցում՝ լուսանկարչատան առջեւ, ժամանակին հաճախ էր կանգ առել Շահնուրի վեպի հերոս Պետրոսն ու սպասել Նենեֆին: Պետրոսը պոլսեցուն հատուկ ճարպկությամբ կարողացել էր ընտելանալ նոր միջավայրին, գտնել հոգեհարազատ զբաղմունք՝ աշխատանքի անցնելով «Մեծ ծառուղիներ» անվանումը կրող լուսանկարչատանը: Այստեղ՝ ճանաչված լուսանկարչի մոտ, մնացել էր երկու տարի, կատարելագործել իր արհեստը՝ «սորունելով նրբութիւններ, պզտիկ խաղեր, որոնց շնորհիւ լուսանկարիչ մը կը հաւակնի արուեստագետ եղած ըլլալ»: Շատ չէր պահանջվել նրանից, որ ընտելանա Փարիզի կենսակերպին: Աշխատանքն ու սերը նրան ավելի են մերձեցրել փարիզյան բարբերին ու մթնոլորտին:

Պատահական չէ, որ Որբունին շահնուրյան հերոսներին հիշեցնող նման սկիզբ է ընտրում իր պատմվածքին՝ ակնարկելով Շահնուրի հերոսներին:

Ազգային պատմությունն անմիջականորեն առնչվում է տվյալ ազգի յուրաքան-



չյուր ներկայացուցչի պատմությամբ, յուրաքանչյուր անհատի կենսագրությամբ: Ազգի ամեն ներկայացուցիչ մի մասնիկն է իր երկրի ու ժողովրդի պատմության: Իր կենսակերպով ազգի պատմությունն ու նկարագիր է կերտում: Շահնուրի նման Որբու-

նին եւս անդրադառնում է օտար ավերում իրենց կյանքն ապրող հայերին, որոնց նահանջի պատմությունն իրենց ազգային պատմությունից սկսվում է սիրուց: Սերն ու ազգային պատմությունը միախառնված իրողություններ են: Սերն ու ընտանիքը նպաստում են ազգային արժեքների պահպանմանն ու տարածմանը: Առավել դժվար է այդ արժեքների պահպանումն օտար հողում, երբ առկա են տարբեր ազգերի, այս դեպքում՝ հայերի եւ ֆրանսիացիների գաղափարների ու ըմբռնումների տարբերություն ու բախում:

Օտար հողում ազգային դիմագծից հեռացումն առաջին հերթին սկսվում, ապա շարունակվում է «ազատ» բարքերին տրվելով, հրապուրամբներով ու գայթակղություններով: «Շահնուրը ողջ վեպի միջով անց է կացնում գերագույն մի միտք՝ օտար սերը ազգային առումով նույնքան այլասերող է, որքան օտար լեզվի օգտագործումը, բաներ, որոնք, սակայն, որպես անխուսափելի պարտադրանք կախված են հող ու հայրենիք կորցրած սերունդների գլխին» (Ս. Ավագյան, Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Երեւան, 2004, էջ 77):

Սերը, ներխուժված ազգային պատմությանն ու մարդկային ճակատագրին, դառնում է ազգային պատմության մոռացման

պատճառ: Այդ երեկո Մելքոնը կանգնած էր Տիտղոսի արձանի պատվանդանի մոտ եւ մտածում էր իր կյանքի, դժվարին օրերի մասին. «Գլխահակ ու մակոտ, Մելքոն նախածրվել կը հետեւէր մայթին վրայ անցողիներու ոտքերէն հոս-հոն շարտուած տերէներուն խժալուր աղմուկին, որ կարծես ոտնակոխ համեստ սիրտի մը կսկիծը ըլլար: Թէեւ նոյեմբերի օդին թացութեանը կաշող ցուրտը տրտում արտայայտութիւն մը կուտայ մարդուն, բայց Մելքոնի տրտմութեան պատճառը ուրիշ էր: Ամբողջ օրը դիմեր էր ծանօթներու, փոքրիկ փոխառութեան մը համար, բայց ամէն անգամ որ ուզած էր յայտնել իր այցելութեան նպատակը, անմղելի զգացում մը արգելք հանդիսացած էր» (Չ. Որբունի, Վարձու սենեակ, էջ 314):

Դիմացիմին ամեն անգամ թվում էր, որ Մելքոնը հիվանդ է, բայց նա հիվանդ չէր, գուժար ուզելն էր հիվանդացնող գործոն: Ժամանակին թանկարժեք գրքերի խանութ էր ունեցել եւ այդպես կարողացել էլ համապագայի հացը վաստակել, բայց վրա էր հասել պատերազմը, ու ամեն ինչ կորցրել էր: Իրեն աքսորել էին Գերմանիա, իսկ խանութը կողոպտել էին: Այդպես մնացել էր առանց աշխատանքի եւ առանց դրամի:

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


Բանասիրական գիտ. թեկնածու

Դոկտոր Գեորգ Աբգարյանը եւ նրա հայրենականներ գերդաստանը

← էջ 4

Գ. Աբգարյան. Պրոֆ. Յանս Վալտեր Պոլլ (Քյոլն), Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» (թարգմ. գերմաներենից Գ. Աբգարյանի), «Պատմաբանասիրական հանդես», 1973, №2, էջ 105–112: Նույնի՝ Դանիել Վարուժան եւ Ֆրանց Վերֆելի, «Գրական թերթ», 1984, 1 հունիսի: Նույնի՝ Թադևոս զանգերի դոկտրինը (Ֆրանց Վերֆելի մասին), «Սովետական շաբաթական», 1985, №4, էջ 28–31: Նույնի՝ Ալմա Մահլեր-Վերֆելի. «Իմ կյանքը» (Ֆրանց Վերֆելի կնոջ մասին), «Հայրենիքի ծայր», 1986, 18 հունիսի: Նույնի՝ Ֆրանց Վերֆելի փրկած մի երգ, «Հայրենիքի ծայր», 1990, 26 սեպտեմբերի: Նույնի՝ Ծննդյան ճրագայույց երեկոյն. Մեծ մարդասերը, հայ ժողովրդի մեծ բարեկամը (Ֆրանց Վերֆելի մասին), «Հայրենիքի ծայր», 1991, 10 հուլիսի):

Գեորգ Աբգարյանը կազմել է «Հայկական աղբյուրներն Աբխազիայի եւ արխազների մասին» ռուսերեն ժողովածուն: Առանձին հոդվածներ է նվիրել բազմաթիվ հին ու նոր գրողների եւ բանաստեղծների՝ Խորենացի, Նարեկացի, Լամբրոնացի, Թլկուրացի, Կարապետ Վիպոլ, Աբովյան, Բաֆֆի, Իսահակյան, Վարուժան, Վերֆել, Խեչումյան եւ այլք (դրանցից մեկը՝ «Իսահակյանագիտությունը 1984-ին» («Գրական թերթ», 1984, 30 նոյեմբերի), նվիրված էր տողերիս գրողի «Ավետիք Իսահակյան՝ վաղ տարիներ» մենագրությանը): Նրա գրչին է պատկանում նաեւ եվրոպական եւ ամերիկյան հայագետների ու հայագիտության պատմությանը նվիրված հոդվածների շարք: 1975–1976 թթ. Աբգարյանը երեւանի պետական համալսարանում դասավանդել է հայ թարգմանական մատենագրության պատմություն:



Գերմանուհի Գաբրիելե Վինկլերը (ծնվ. 1940 թ.) գերմանական հայագիտության ներկայումս գործող նշանավոր դեմքերից է. Հռոմում, Մյունխենում, Օքսֆորդում ուսումնասիրել է հայերեն, վրացերեն, ասորերեն, ղպտիերեն, եթովպերեն: 1986 թ. նա մասնակցեց Երեւանում կայացած անդրանիկ Միջազգային հայագիտական սիմպոզիումին: 1994 թ. Հռոմում գերմաներեն հրատարակեց «Կորյունի՝ Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը եւ մեկնաբանում» վերնագրով սովորածավալ եւ մանրախույզ աշխատությունը (Winkler Gabriele. Koriwns Biographie des Mesrop Maštoc'. Übersetzung und Kommentar, Orientalia Christiana Analecta 245. Rom 1994, 452 S):

Վինկլերի այս գիրքը նույնպես չվրիպեց Գ. Աբգարյանի ուշադրությունից, եւ նա դրան նվիրեց երկու հոդված՝ «Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը» (Գ. Աբգարյան. Գերմանական մաշտոցագիտության նոր նվաճումը, «Հայաստան», 1995 թ. 18 մայիսի), ապա եւ՝ «Մաշտոցի վարքը». գերմաներեն եւ կորինագիտական այլ խնդիրներ» (Գ. Աբգարյան. «Մաշտոցի վարքը». գերմաներեն թարգմանությունը եւ կորինագիտական այլ խնդիրներ», «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1996, թիվ 1–12, էջ 454–473): Կարելի է մի ամբողջ գեկուցում կարդալ միայն այս գրքի քննության եւ բարձրացրած հարցերի վերաբերյալ եւ սակայն չսպառել դոկտոր Աբգարյանի սուր դիտողականության եւ դիպուկ գնահատականների այն արտառնոց ջանքը եւ ազնիվ մղումը, որով գիտնականը ձգտում է հայ ընթերցողին լիովին հասցնել գերմանուհի հայագետի տքնաջան պրպտումները. «Հուրջ 450 էջից բաղկացած հրատարակության միայն 50 էջն է կազմում Կորյունի երկի թարգմանությունը: Սա փաստորեն ատաղծ է հանդիսացել իր շուրջը ծավալելու համար մի անմախաղեպ մենագրություն, որը ճիշտ կլինեք կոչել մաշտոցագիտական հանրագիտարան: Հեղինակի ուշադրությունից չի վրիպել ոչ մի կարեւոր խնդիր: Գիտական գրականությունը ներկայացված է գրեթե անթերի մատենագիտությամբ: Բանասիրությանը այսօր էլ չի դադարել զբաղեցնել Կորյունի, Ագաթանգեղոսի եւ Բուզանդի փոխադարձ կապը: Գերմաներեն հրատարակությունում պատշաճ տեղ է հատկացված նաեւ այս խնդրին: Կազմված են այդ պատմիչների

ընդհանրությունները ներկայացնող ցանկեր: Ներկայացված են նաեւ Մովսես Խորենացու եւ Ղազար Փարպեցու համընկնող տեղեկությունները: Ագաթանգեղոսի եւ Կորյունի կապը քննելիս հմուտ մասնագետը պատարագագիտության տեսանկյունից եւ մկրտության շարականների լույսի տակ է վերլուծում առեղծվածային «հայկական չափուն ծնանել ծնունդ նորոգ...» հանրահայտ արտահայտությունը: Նման վերծանությունների շնորհիվ Մաշտոցի վարքն իմաստավորվում է նորովի» (Գ. Աբգարյան. «Հայաստան»):

Կորյունի մախորդ երեք թարգմանությունները, որ լույս են տեսել 1841-ին Տյուբինգենում, 1927-ին՝ Մյունխենում, եւ 1963-ին՝ Դյուսելդորֆում, կատարված են թերի գրաբար տեքստերից, մինչդեռ Վինկլերի թարգմանությունը հիմքում ունի Մ. Աբեղյանի 1941 թվականի քննական հրատարակությունը՝ իր ծանոթագրումներով: Ամբողջական տեքստը եւ մանրակրկիտ ծանոթագրումները հնարավորություն են տվել գերմանուհի թարգմանչին անհամեմատ ծավալում եւ բազմակողմանի քննությամբ բացահայտել եւ գերմանացի հայագետներին ու մասնագետ ընթերցողներին մատուցել IV–V դարերի հայ մեծ լուսավորիչ, Հայ գրերի գյուտի եւ Հայոց այբուբենի մեծ երախտավոր Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գրաստեղծ գործունեությունը:

Մ. Աբեղյանի հրատարակությունը, Գ. Աբգարյանի գնահատմամբ, «մեկնաբանությունների լիակատարությամբ ունի հանրագիտարանային արժեք»: Մաշտոցագիտական որոշ խնդիրներ այնտեղ ներկայացված են նոր լույսի տակ: → էջ 8

ՀԱՅ ԻՄԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՐՎԵՍԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ ԻՄԱՌԻՆԵՐԱՆԸ

← էջ 3

Այստեղ պահպանվում են նաեւ այլ ժողովուրդների պատմությանն ու մշակույթին, ինչպես նաեւ հայ գործիչների միջազգային առնչություններին վերաբերող բազմաթիվ վավերագրեր, մի շարք օտարազգի գրողների ու արվեստագետների տարաբնույթ գրություններ եւ գործեր:

Մշակութային մեծ արժեքներ անթեղած այս կառույցը կատարել եւ կատարում է մի քանի հիմնական գործառնություններ, զուցե ճիշտ է ասել՝ առաքելություններ, որոնք կազմում են նրա կենսագործունեության հայեցակարգն ու գոյության իմաստը: Ամենահիմնական ազգային մշակույթի գեմոֆոնի զգալի մասը հանդիսացող արժեքների պահպանումը եւ հնարավորինս անաղարտ հանձնումն է եկող սերունդներին:

Թանգարանի ֆոնդերն ու հավաքածուները պահպանվում են հատուկ ֆոնդադարաններում, որոնք աստիճանաբար հազեցվում են պահպանության համար անհրաժեշտ միջոցներով: Ֆոնդադարանները զբաղված են ըստ հայ մշակույթի՝ վերը արդեն նշված չորս խոշոր բնագավառների. ֆոնդերը 4-ն են՝ գրական, թատերական, երաժշտական եւ կինոյի: Ընդ որում, կատարված են նաեւ որոշ ներքին տարանջատումներ՝ ըստ նյութերի տեսակների: Այսպես՝ գրական ֆոնդերը զատված են ըստ ձեռագիր գործերի (ձեռագրատուն) եւ ըստ հուշային առարկաների (լուսանկարներ, անձնական իրեր, կերպարվեստի գործեր եւ այլն (հուշային բաժին)): Թատերական ֆոնդերից զատ՝ առանձին ֆոնդադարանում պահպանվում են հայ թատրոնի պատմությանը վերաբերող լուսանկարներ, կերպարվեստի գործեր եւ բեմական հագուստներ: Առանձնացված են նաեւ թանգարանի ունեցած գրականությունը (գրադարան) եւ ձայնային ու տեսային նյութերը (տեսա-ձայնադարան):

Ավելի քան 500 ֆոնդերի ու հավաքածուների ընդգրկմամբ ամենահարուստը գրական ֆոնդային բաժինն է: Հարուստ է հատկապես գրական ձեռագրային են-

թաբաժինը՝ ձեռագրատունը, որտեղ այսօրվա տվյալներով՝ պահպանվում է մոտ 400 000 միավոր: Ամենահին մուշը Սալաթ-Նովայի երգերի ինքնագիր տետրն է՝ Դավթարը՝ ստեղծված 1750-ական թվականներին: Թանգարանի հիմնադիր Ե. Շահագիզի բերած արխիվները համալրվել են թե՛ նոր շրջանի արեւելահայ ու արեւմտահայ եւ թե՛ խորհրդահայ ու սփյուռքահայ գրողների ձեռագրերով: Արժեքավոր է հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ֆոնդը: Այստեղ, նրա «Վերջ Հայաստանի» անմահ վեպի եւ այլ գործերի սեւագիր ու մաքրագիր օրինակներից զատ, նշանակալից են նաեւ գրողի ստացած մամակները, որոնց հեղինակներից հիշատակության արժանի են օտարազգի մի շարք անվանի դեմքեր՝ Աբիխ, Պարրոտ, Պետերման եւ այլք: Հարուստ են նաեւ Գ. Սունդուկյանի, Թ. Ագապյանի, Ա. Շիրվանզադեի, Գ. Չոխրապի, Մ. Մեծարենցի, Հ. Թումանյանի, Ե. Չարենցի եւ մի շարք այլ գրողների ֆոնդերը, իսկ ամենայն հայոց բանաստեղծի ձեռագրերը բացահայտում են թե՛ մեծ բանաստեղծ եւ թե՛ մանկագիր, թարգմանիչ, ուսումնասիրող ու ազգային գործիչ Հովհաննես Թումանյանին: Անչափ տպավորիչ են մեր բանաստեղծական արվեստի մյուս զագաթի՝ Եղիշե Չարենցի ձեռագրերը, հատկապես այն գործերը, որոնք երկար տարիներ փրկության նպատակով ի պահ տրված են եղել հողին եւ կյանք վերադառնալուց հետո մասամբ վերականգնվել. ցավոք, դրանց մի մասը մնացել է փշրված վիճակում: Հայ-ֆրանսիական գրական ու մշակութային առնչությունների մի անսպառ նշխարապահոց է հատկապես Արշակ Չոպանյանի ֆոնդը, որտեղ, բազմաթիվ այլ նյութերից զատ, առկա են նաեւ նրա գրած ու ստացած հարյուրավոր հայերեն, ֆրանսերեն եւ այլ լեզուներով մամակներ: Ստացած մամակների հեղինակների մեջ կան այնպիսի փառահեղ անուններ, ինչպիսիք են Ա. Դոդեն, Է. Չոլան, Պ. Էլյուարը, Ժ. ժորեսը, Պ. Լոթին, Ֆ. Կոպպեն, Ս. Մալարմեն, Ֆ. Մակ-



լերը, Ա. Մեյեն, Ֆ. Միստրալը, Ռ. Ռուլանը, Է. Վերհաբը, Ֆ. Վերֆելը, Ա. Ֆրանսը եւ շատ ուրիշներ:

Թանգարանի այս ֆոնդային ենթաբաժնում մշտանա ներկայություն ունի տվյալ ժամանակաշրջանի գրեթե ողջ հայ գրականությունը՝ իր հիմնական դասերով: Իրենց ձեռագրային հարուստ ժառանգությամբ այստեղ ներկա են նաեւ հայագիտության մի շարք երախտավորներ (Մ. Էմին, Հ. Աճառյան, Մ. Աբեղյան, Ստ. Մալխասյանց եւ այլք): Ձեռագրատանն են պահպանվում նաեւ տարբեր գրական ու գիտական կազմակերպությունների, խմբագրությունների, կրթական ու մշակութային հաստատությունների վերաբերող ձեռագիր նյութեր, ինչպես նաեւ իրենց բնույթով ու ժամային դասակարգմամբ առանձնացված հավաքածուներ: Հիշարժան են հատկապես մեծն Ջիվանու ժողոված բազմաթիվ հայ աշուղների գործերը: Թանգարանի ձեռագրատունը պատմաժամանակային իմաստով կարելի է համարել

Մաշտոցյան մայր ձեռագրատան շարունակությունը:

Գրական ֆոնդում կան անձնական եւ հիմնարկ-կազմակերպություններին, ուսումնական հաստատություններին եւ խմբագրություններին վերաբերող ֆոնդեր ու հավաքածուներ: Այստեղ պահվում են խմբագրությունների արխիվներ, հնատիպ գրքեր, վավերագրեր: Ֆոնդերում գտնվող հայագիտական ուսումնասիրությունների եւ նյութերի մեջ հանդիպում են 17–18-րդ դարերից եւ ավելի վաղ ժամանակներից եկող փաստաթղթեր, մնացած նյութերը գերազանցապես վերաբերում են 19–20-րդ դարերի մշակութային կյանքին: Թանգարանի գրական բաժնում պահվում են արձակ, չափածո, դրամատիկական (մեծ մասամբ ինքնագիր) երկեր, պատմաբանասիրական ուսումնասիրություններ, հոդվածներ, մամակներ:

Շարունակելի

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

Մերգեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ

Սկիզբը՝ թիվ 9—10

Նետագա տարիներին, շարունակելով ծանոթությունը հայ գրականությանը, Շերվինսկին կրկին անգամ իր ուշադրությունը սեւեռեց Դանիել Վարուժանի ստեղծագործությանը եւ թարգմանեց նաեւ «Հարձը» պոեմը: Վարուժանի պոեմի թարգմանությունն ընթանում էր հայ մշակույթի ուսումնասիրությամբ, քանի որ առաջարկ էր ստացել պոեմը թարգմանելու հենց Երեւանում: Շերվինսկին այս առիթով գրում է. «Պոեմի տեքստը բանաստեղծի ռոմանտիկ նախաբանի միջով իմ առջեւ բացում էր հայ միջնադարին բնորոշ հատկանիշները: Երկուստեւ՝ Վարուժանի տոկոսը հեթանոսությանը այժմ մեր աչքին կարող է չափազանց թվալ, բայց այնուամենայնիվ ասպետական կենցաղի պատկերները չեն կարող չգրավել ընթերցողին» (էջ 192): Թարգմանչին հաջողվել է վերկերտել այդ պատկերները, ինչպես նաեւ վառ պահել պոեմի ասպետական ոգին: Նշենք նաեւ, որ Շերվինսկին պահպանել է նաեւ բնագրի տաղաչափական առանձնահատկությունները եւ կատարել տողերի կից հանգավորումը՝ aabb: Հարկ է նշել, որ թարգմանությունն աչքի է ընկնում մեկ այլ առանձնահատկությամբ եւս: Ձգտելով հնարավորինս հարազատ մնալ բնագրին եւ պահպանել պոեմի ազգային բնույթը՝ Մերգեյ Շերվինսկին որոշ բառեր անթարգման է թողնում: Ասվածը հիմնավորելու համար ներկայացնենք բնագրից մի հատված.

— Տրդանտ,— կ'ըսէ նահապետս,— այս գիշեր քուկը է իմ տուն.
Մարաց աշխարհին հեռու է, եւ դու անշուշտ պարտասուն.
Մըտի՛ր սրահը տօնին, թող իրարու դէմ փըշրին
Մեր բաժակներն, ու մեր սէրը մըկըրտէ թող գինին:
(Դանիել Վարուժան, Երկեր, Երեւան, 1979, էջ 404)

Շերվինսկին բնագրի սույն հատվածը թարգմանել է հետևյալ կերպ.

— Тырдат,— сказал нахапет,— мой дом — твой дом в эту ночь.
Далече маров страна, устал ты, видно, не в мочь.
Войди в мой мирный покой, две чаши мы разошьем,
Сегодня наша любовь крещенье примет вином!
(С. Шервинский, մշվ. աշխ., էջ 169)

Թարգմանության մեջ անթարգման է թողնված «нахапет» բառը, եւ թարգմանիչը միտումնավոր է դադարել, որպեսզի երես տեքստի ազգային բնույթը: Անթարգման թողնված բառերի հանդիպում ենք պոեմի նաեւ այլ հատվածներում: Օրինակ՝ Վարուժանը գրում է.

Հոն են ճորտերը Սիւնեաց գաւառներուն երկտասան,
Լերան ազատ գաւազներ, միշտ գրահի մէջ կուրծքերնին՝
Որոնք հըզօր կուճի պէս ջահերու տակ կը փայլին:
Հոն կան նաեւ բըղէշխներ, ազատամին քաջարի՝
Որ կը պատմեն թէ ինչպէս կ'որսան վարազը վայրի:
Ազնըւատոհմ սեպուհներ ոսկեծարմանդ խլաներով
Գինւոյ բաժակ ի ձեռին կը ծիծաղին կէս գինով:
(Դ. Վարուժան, մշվ. աշխ., էջ 405)

Շերվինսկին թարգմանության մեջ գրում է.

Двенадцать джортов сидят сюнийских всех областей,
Сыны свободные гор, чья грудь всечасно в броне,
Ее надежная сталь при зыбком блещет огне.
Тут же бдешхи сидят, в боях удалая знать,
Ведут рассказы о том, как вепрей весело гнать.
Селухи знатных родов, в накидках с ярым кольцом,
Воздели чаши в руках; смеются, рдея лицом.
(С. Шервинский, մշվ. աշխ., էջ 169)



Ինչպես երեւում է, այս հատվածում անթարգման են թողնված «джорт», «бдешхи» եւ «селухи» բառերը: Առհասարակ, այս առումով պետք է նշել, որ 20-րդ դարի 20—30-ական թվականներին թարգմանական գործում նկատվեց մի նոր միտում, այն է՝ տեքստի որոշ բառեր ոչ թե թարգմանվում էին, այլ առաջարկվում, որպեսզի ընդգծվի բնագրի ազգային երանգավորումը: Այս երեւույթն իր դրսեւորումը գտավ հատկապես Բյուրուսովի ու նրա աշակերտների թարգմանական գործունեության մեջ: Մերգեյ Շերվինսկին եւս, լինելով Բյուրուսովի աշակերտը, կիրառում էր այս հմարը, եւ հայ գրականությունից արված նրա թարգմանություններում հանդիպում ենք մի շարք անթարգման բառերի: Այս առումով անդրադառնանք նաեւ Ավետիք Իսահակյանի «Հայրենի հող» լեգենդի թարգմանությանը: Իսահակյանն իր ստեղծագործության մեջ ներկայացնում է քաջ զորավարի եւ փոքրոգի թագավորի հակադրությունը՝ այդ պատմությանը հաղորդելով մեծ խորհուրդ եւ գեղեցկություն: Թագավորից վիրավորված եւ իր հայրենիքից հեռացած զորավարի մոտ գալիս են ժողովրդի մարդիկ՝ շինականը՝ մի բուռ հողով, եւ գուսանը՝ մայրենի երգերով: Նրա սրտում կրկին բորբոքվում է հայրենիքի սերը, հնչում է արյան կանչը, եւ հարազատ մեղեդիներն արթնացնում են հայրենի հողի կարոտը: Այսինքն՝ այս ստեղծագործության մեջ իրար են հյուսվում կարոտն ու հայրենասիրությունը, եւ բնական է, որ օտարազգի թարգմանչի համար պետք է որ դժվար լիներ ստեղծագործության հուզականությունը փոխադրելը: Սակայն այս լեգենդի թարգմանությունն ընթերցելիս կարելի է վստահորեն ասել, որ Իսահակյանը հենց այդպես է կգրեր, եթե ստեղծագործեր ռուսաց լեզվով: Հաստատելու համար վերն ասվածը՝ ներկայացնենք բնագրից մի հատված՝ Շերվինսկու թարգմանությամբ.

Եղել է հմում, պերճ արեւելքում
Մի քաջ զորավար՝ հայրենապաշտպան,
Առանց ընկճելու երկրի թշնամուն՝
Նրա սուրը երբեք չի մտել պատյան:

Նրա արծակած տեղը խոլական
Թշնամու հողում ցցվել է ահեղ,
Նրա սարսափը օրհասի նման
Թշնամու գլխին կախվել ամեն տեղ:

Եվ ժողովրդի բնարը ազնիվ
Փառաբանել է անունը նրա,
Հաղթանակները փայլուն ու անթիվ՝
Սուրբ հայրենիքի ոսոխի վրա:
(Ավ. Իսահակյան, Երկեր, Երեւան, 1987, էջ 307)

Շերվինսկին այս հատվածը թարգմանել է հետևյալ կերպ.

Жил некогда в пышных пределах востока
Воитель, защитник родимой страны.
Врага не повергнув, бывало, до срока
Меча боевого не вложет в ножны.

О том, что копье знаменитого мужа
Далече вонзается, знали кругом—
И року подобный, неслыханный ужас
И денно и ночью висел над врагом.

И вскоре правдивая лира народа
Широко прославила имя его,
Воспела победы счастливых походов,
Отчизны святой над врагом торжество.
(С. Шервинский, մշվ. աշխ. էջ 272)

Ահա այսպես է բնութագրվում լեգենդի գլխավոր հերոսը, եւ թարգմանչին հաջողվել է այդ կերպարը բնութագրելիս պահպանել բնագրում առկա հայրենասիրության, ուժի եւ զորության շունչը:

Թարգմանության ընթացքում առաջ եկան մի շարք հարցեր, օրինակ՝ պէտք է արդյոք թարգմանել բնագրում տեղ գտած որոշ ազգային բառեր, թե՞ ոչ: Ինչպես նշվել է, այս դեպքում եւս Շերվինսկին հարազատ մնաց իր եւ իր ուսուցչի՝ Վալերի Բյուրուսովի սկզբունքներին, եւ որոշ բառեր կրկին անգամ անթարգման թողնվեցին, որպեսզի ընդգծեն ստեղծագործության ազգային բնույթը: Օրինակ՝ Շերվինսկին գրում է.

Прочитан царю и его **нахарарам**
Суровый наказ — чтобы с просьбою шли
В соседний предел за воителем храбрым
И с честью и славой домой привели.

И царь по совету своих приближенных
Послов избирает из тайных палат,
Почтить полководца державным поклоном
И слезно просить возвратиться назад.

Путь долог и труден. Но вот к **спарапету**
Вошли и, почтительно с ним говоря,
Ласкают изгнанника царским приветом,
Ему сообщают о просьбе царя.
(С. Шервинский, մշվ. աշխ., էջ 273)

Թարգմանության այս հատվածում հանդիպում ենք տառադարձված «нахарар» եւ «спарапет» բառերի, որոնք տառադարձված ծանոթագրվում են՝ «спарапет»-ը բացատրելով որպես «военачальник», իսկ՝ «нахарар»-ը՝ «владельческий князь, правитель»: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մեր օրերում թարգմանական այս հմարը կիրառելի չէ եւ անգամ սխալ է համարվում, քանի որ տառադարձված բառերը կարող են խոչընդոտ հանդիսանալ տեքստի լիարժեք ընկալման համար: Այս առումով Շերվինսկու թարգմանություններում հանդիպող անթարգման բառերը եւս դիտվում են պետք է դիտել որպես թերություն:

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱՉԱՐՅԱՆ

Դուկտոր Գեորգ Աբգարյանը եւ Նրա հայրենականներ գերդաստանը

էջ 4, 7

Դրանցից է նաեւ Մեսրոպ Մաշտոցի եւ Մոպսուեստիայի եպիսկոպոս Թեոդորոսի կապերի խնդիրը: Թեոդորոսը Անտիոքում քահանա («Քահանա») տիտղոսը Գ. Վինկլերի գերմաներեն տեքստում առկա է presbyter ձեւով, որը, ըստ իս, պետք է հայերեն թարգմանել «երէց») եղած տարիներին գրել է պարսից մոգերի դէմ մի գրվածք՝ ուղղված ծագումով հայաստանցի քորեպիսկոպոս Մաստուրիոսին: Ավիշանը դեռեւս 1901 թ. «Հայապատումում» Մաստուրիոսին կոչում է Մաշտոց: Նրան հետեւել են Ն. Ադոնցը եւ շատ ուրիշներ: Ն. Ավինյանը ենթադրել է, թե Մաշտոցը 380-ական թվականներին կրթու-

թյուն է ստացել Անտիոքում՝ Լիբանիոսի դպրոցում եւ այդ ընթացքում ծանոթ է եղել Թեոդորոսին: Վերջինիս քահանա (պրեսբիտեր) լինելու եւ մոգերի դէմ գրելու մասին տեղեկությունը մասնագետները քաղել են Փոտ պատրիարքի «Մատենադարան» կամ «Բիւրամատեան» հատորից: Սակայն 1959 թ. Փարիզում հրատարակված «Մատենադարանում», որը Փոտի երկի քննական բնագիրն է, Թեոդորոսի անվան դիմաց բացակայում է «պրեսբիտեր» (քահանա) տիտղոսը: Սույն նորությունը «Մաշտոցի վարքի» գերմաներեն թարգմանությունում բերված է ցույց տալու համար, որ Մաշտոցին եւ Մոպսուեստացուն միմյանց հետ կա-

պելու նպատակով վկայակոչված «պրեսբիտեր» տիտղոսը դադարում է հաստատ կռվան հանդիսանալուց:

Ընդհանրապես տիկին Գաբրիելե Վինկլերի մենագրությունում ուսումնասիրված են գրերի գյուտի ժամանակաշրջանին առնչվող պատմական կարեւոր իրադարձությունները, նորովի են վերլուծված գրավոր հուշարձանները, բացահայտված են նոր իրողություններ: Այս առումով մենագրությունն ունի պատմագիտական լուրջ արժեք եւ չպետք է վրիպի մասնագետների ուշադրությունից:

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 30.06.2021 թ.

Տպագրման կո՛դ՝ 1225